



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material







ԳԱՒԱՌԱԿԱՆ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ԴՊՐՈՑԷՆ ՓԱԽՉՈՂ ՏՂՈՒ ՄԸ

Ա. ՊԱ. ԳԱՆ

ԵՐԳԱՒԱՌՆ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՄԻ ԱՐԱՐ

ԵՐ ՅԵՐԿՈՒՄ ՊԱՏԿԵՐՍ

894504

3468



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԱՅ Մ. ԱՇԷԱՆ

ՍԻՄՊՐԻԷԻ ԻՆՆ ՂԵՏԱՆՔԻ ԹԻՒ 35

— 1880 —



# ՆՈՒԷՐ

## ԱՆԿԵՂԾ ՍԻՐՈՅ

ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԵՂԲՕՐՈՐԴԻ ԻՄ

ՊԱՌՈՆ ՄԿՐՏԻՉ ԼՈՒՍՊԱՐՈՆԵԱՂ



### Ազնիւ պատանեակ

Իբրև սոսկ եղբորորդի մը ինձ՝ տակաւին չատ կարևոր գոհողութիւններ կպարտաւորէի քեզ ընկ սակայն քանի մը պարագաներով այս պարտականութիւնը խիստ կը ծանրանայ վրաս . այնպէս որ միշտ կը մտածեմ թէ ի՞նչ մեծ բան մը կրնամ ընել քեզ , որ հասարակ հօրեղբայրներու կարողութիւնէն վեր ըլլալով՝ պարտականութեան ու խղճիս առջև ազատ ու հանդարտ գտնուիմ :

Դու չգիտես , բայց անշուշտ լսած ես թէ քո ծնունդ և կենաց սկզբնաւորութիւն խիստ տարօրինակ ու չարաբաստիկ եղաւ , բաբէ , այն վայրկեան որ քեզ կեանք կուտար , նոյն միջոցին մօրդ ալ արեւը կխաբանէր այլ ևւս ծագիլէ , և մենք հազիւ առնելով ծննդեանդ աւելաւոր . մինչդեռ կը պատրաստուէինք ուրախութեան հանդէս մի կատարել և դուարձանալ , արդէն իսկ մօրդ թակկացումը կը գուժեն մեզ , ո՛հ կարօտիւ մեռաւ պատուական ծնօղդ և դու դեռ նորա երեսը չտեսած՝ խանձարուրիդ մէջէն անմիջապէս սկսեցիր մեզ հետ լալ , չգիտենք մօրդ հեռացումը թէ անօթութիւնդ :

Այս պահուս սիրելիս , շատեր խղճացին քեզ՝ իբրև ամենաթշուառ որբի մը վրայ , կարծելով թէ այսպէս վաղ իմն ծնողական գրկէ զբրկուելով պիտի մնաս իսպառ անտէր անխնամ գետիներու վրայ , սակայն մայրս և այն ատեն քո մամն ջրեց իսկոյն ամենուրեք կարծիքն առաւ զքեզ գիրքը , զաւակ ըրաւ իրեն , և կի՛է կաթ չունէր իւր բուն կանց մէջ քեզ ջամբելու համար , դրսէն կաթ ձարեց , զանազան տեսակ սնունդներ գտաւ ու չլիողուց որ դու անօթի մնաս և երթաս գն





բեղմանի տակը մօրդ ստինկները կրկտելու :

Այն օրէն, անուշիկ եղբօրորդի իմ, դու միւս եղբայր մի եղար ինձ և շատ տարի բռիս մէջ մեծնայով . ուրիշ կերպ կը նայէի քեզ, քան ինչպէս կրնայի նայիլ լոկ եղբօրորդի մը ըլլալովդ ինձ . այս ընթացքը նոր պարտականութիւն մը կենթադրէր յիս առաւելագոյն խնամք մտածելու Ձեզ :

Այս ալ բաւական չէր, պարո՛ն, քո հայրն բաժան եղբայր մը ըլլալով ինձ, երբ ես երջանիկ բաղդի բերմամբ Կարնոյ ուսումնարանն մտնելու պատիւն ունեցայ . նա ոչինչ նիւթական զոհողութիւն խնայեց իմ ուսմունք կատարելագործել տալու համար . և եօթն տարի շարունակ իւր հացէն և ջրէն բաշխելով երբ կելլէի վերջապէս այդ պաշտելի սրբաանէն և իրմէ բաժնուելու կը պատրաստուէի . նա իբրեւ իւր բոլոր երախտեաց փոխարկնութիւն մը՝ Ձեր բարոյական ու խմացական դասախարակութեան գործը յանձնեց ինձ . որ ամենէն աւելի մեծ և անխուսաբելի պարտականութիւն մ'է վրաս :

Արդ ի՞նչպէս կրնայի այս պարտականութիւնները կատարել առանց երբէք արդեամբ և իրօք գործ մը գործելու Ձեզ վրայ : Ատեն մը որ քովս էիր, ըստ խնոփանն անարժանաբար կաշխատէի Ձեր իմացական շէնքին շնութեանը . սակայն գեռ հիմերը իսկ ձգելու չկարողացած անապոստոսն բաղդը գքեզ բաժնեց ինձմէ և ի՛նչ կրնայի ընել այս միջոցին, պարտականութենէ իսպառ խալըսած չէի կրնար համարիլ գինքս . այլ պէտք էր դարձեալ գործել . ուստի թէպէտ ժամանակ և պատենութիւն ունենալովս կը գրէի Ձեզ յորդորական ու խորխուսիչ նամակներ . սակայն ատնք անձուկ թղթի անձուկ պարունակութիւնք ըլլալով . չէին զօրեր սրտիս փափաքած ներգործութիւնը ձեզ վրայ կատարելու, որոց համար խորհեցայ մի երկար և բաւականագօր խրատական գրել Ձեզ . զոր անա ըստ մեր տանելոյ դոյզն կարողութեան 'ը կատար հանելով . թատերական խաղու մը գաղափարովը դադարած Ձեզ կը մատուցանեմ :

Արդ, սիրելիս, դասերէդ պարագ եղած ատենդ ա՛ռ այս տետրակը ձեռքդ, կարգա՛, և ուշիւ կարգա՛, որովհետեւ հոս պիտի տեսնես բացերեւ թէ ի՞նչ է մարդ ի՛նչպէս և ի՞նչ կերպով կը կրթուի ու կը դարգանայ . ի՞նչ են ուսման ու կրթութեան օգուտները և ի՞նչ անուսումնութեան հետեւանքն, կարդա և պիտի հասկնաս թէ ո՛րչափ յարգի, պատուաւոր ու երջանիկ է ուսեալ ու գիտուն մարդն, ընդ-

հակառակն ո՛րչափ անարդ, ողորմելի ու թշուառ անուան ու տգէտը . հաւատար անասնոյ մը՝ որ կապրի ուսեւու համար : Ատնք տեսնալ և հասկնալէդ վերջ, սիրելիս, կ'մնայ քեզ սիրել առաջինները, ու արգահատիլ վերջիններուն վրայ . ջանալ դասաւորիլ անոնց կարգը ու ասոնցմէ հեռանալ : Այս է անա, հողիս, այս է իմ բոլոր փափաքածս և աշխատութեանս նպատակ, կ'սիրեմ յուսալ թէ Ձեր խելահասութիւնը եւս բաւական յորդոր մը առնելով սոյն տետրակէն իսպառ ամուլ ու ապարդիւն չպիտի թողու մեր փափաքն ու աշխատութիւնը :

Եղբօրորդուոյս նուիրած սոյն յորդորագրէն քանի մը օրինակ ալ տպագրելով Ձեզ կ'արձնեմ, ո՛վ իմ սիրելի աղղիս սիրելի զաւակները, դուք ալ ատէք սակից մէյմէկ օրինակ և կարդացէք զայն ուրոյն Ձեր տան մէջ . որ անշուշտ քիչ օգուտ չպիտի ընէ Ձեզ ձեր այդ մատաղ ու զարգանալու յատուկ հասակին մէջ . սակայն եթէ հաճիք մի քանինիդ ձեր մէջը խումբ կազմել և՛ զայն թատերական ձեւով ու արարուածներով ներկայացնել : Յայնժամ ոչ միայն պատրաստուած օգուտը աւելի աղղու ու անվրէպ կերպով պիտի ընդունիք, ուսեալին ու անուսին երկու ներհական ու հակադէմ պատկերները իրենց զանազան յատկութիւններովը գործերովը ու պատճառներովը 'ի սմա իբրեւ ընդ հայելուջ ակներեւ տեսնելով այլ աւելի մեծ փոքր մ'ալ պիտի ընդունիք, փոքր մը՝ զոր թերեւս շատ մի թատերական խաղուց մէջ չէք ընդունած :

Յուսալով այսու օգուտ մը ըրած ըլլալ քեզ, ո՛վ սիրուն Մկրտիչս, և քեզմով աղղիս մատաղերամ մանկտեաց :

Մնամ յաջադիմութեանդ յաւէտ աշխատող  
ԳԱՐԻԻԼ Մ. Մ. ԼՈՍՍՊԱՐՈՆԵԱՆ





## ԱՆՁԻՆՔ

ՏԻԳՐԱՆ. — Դպրոցէն փախչող տղան .

ՎԱՂԱՐՇ. — Տիգարնայ հայրը .

ՍԵՊՈՒՆ. — Վաղարշի բարեկամը .

ՌՈՒԲԵՆ.

ԱՐՇԱԿ.

ՎԱՀԱՆ.

ՍՄԲԱՏ.

ՆԵՐՍԵՆ.

ՏԻՐԱՆ.

ՅԱԿՈԲ. — Դերձակ .

ՌՈՒՍԻՆ. — Սեղանաւոր .

ՎԱՐԴԱՆ. } Ռուսինի սպասաւորները .

ԱՐՏԱՇԷՍ.

ԱՐՄԵՆԱԿ. — Յակոբի տղան :

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Նամակաբեր



## ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

(Տասրանն է պարզ սենեակ մը, ալ կողմը գրասեղան մը և ափսոսեր .)

ՏԵՍԻՒ Ա.

(Տէգրան հոնեւով)

ՏԻԳ. (Խռիւրէն) Աղէկ չըրի՞, շատ աղէկ ըրի, ինչ է այս ամէն ատեն քնչածս, փաս ուտելով հոգիս ելաւ, կողերս կասկապուտ կտրեցան, ոտքերուս վրայ եարա չըլլալու տեղ չմնաց, պատճա՛ռն ինչ է, զիս իրեն գերի՞ առաւ. վարժապետ է, վարժապետութիւնը թող ընէ, այս եկնիչէրի անգթութիւնները ով կը քաշէ, շնորքով դաս մը տուած չունի. տայմա զիս կը ծեծէ, ապուշ տխմար սէրսէմ՝ ըսելով անունս սէրսէմ մնաց. է՛հ բաւական է, ալ չեմ երթար կարդալն ալ գլուխըն ուտէ, դասն ալ. ինձի կեանք զուարճութիւն պէտք է. ինչ քարսիրտ և անողորմ է այդ դէմս կլած երեսը չտեսնելիքս ամենեւին չթողուր հանգիստ տեղ մը պըտըտիլ. խաղ մը խաղալ. քէյֆ մը ընել. առաւօտուն կանուխ եկեղեցի պիտի գաք հրաման մը հանած է տաւ կէն. խե՛ղճ Տիգրան. խօրօզ խօսելուն անուշ քնէս աչքերս չբացուիր. ժամը միտքս կիջնայ. չպիտի երթամ ա՛ն խիծեալին փայտը կայ. ինչ ընեմ կելլեմ. կախայ ախամայ աչքերս կէս դոց կէս բաց կերթամ. հապա՞ շուկան կարծես նամէհրամ է մեղի. ձիւնն է եկեր գլխուս պաղտի մը խանթին առջեւ տեսնուիմ. ո՛րչափ, դժբաղդ եմ ես աշխարհք եկած եմ աշխարհի վայելչութիւն վայելչու ու բնաւ վայելած չունիմ. հապա մութ օտարներու մէջ սեւ առիքներու տակ, անբան ընկերներներու մէջ, փայտը ու թաղերը գլխուս վրայ միշտ կարգա՛ միշտ կարգա՛. է՛հ, ահա անխիծեցի կարդալուն ալ մէջը, թող վարժապետս ալ աշակերտ մը ճանչնայ. աղէկ որ փախայ դպրոցէն. աղէկ որ սյդ անիրաւէն հախառ ազատեցի. կարելի է ասկէ վերջը մարդու կարգ անցած օր ու լոյս կը տեսնեմ. հանգիստ ու փառաւոր կեանք մը կանցնեմ. մանաւանդ կարգամ կարգամ ալ տէ ինչ պիտի



ըլլամ, տէրտէր վարդապետ, մէյէր Աստուած խելքս առեր է որ, ազգի մը բեռը կըռնակա առնեմ. վարժապետ ըլլամ, է՛ն, այդ ալ հիչ, ահա տեսնեմ կոր շատերուն վիճակը. թող ըսեն, ո՞ր վարժապետը վերջապէս մարդ մը եղաւ անդին կայնեցաւ, որը քիւրճանը մնայ կոր, որը չուանը, որը զընտանը :

Նրթամ, երթամ ասկէց, թող հայրս գայ զիս հոս չգտնէ, դիտեմ վարժապետս ալ այս ըրածիս համար պիտի բողբէ հորս, և հայրս ալ խիտ կերպով պիտի յանդիմանէ զիս, բայց ես ամենեւին չպիտի լսեմ, ճիտս կտրեն, չուանը ճիտս անցունելով զիս կտրեն. ես այդ անիծեալ դպրոցէն ներս ալ ոտք չպիտի դնեմ. է՛ն, նայինք ինչ կըլլայ, Աստուած ճշմարիտին կողմն է (կէտե՛ս կերթո՛ւ) :

### Տ Ե Ս Ի Լ Բ.

(Տէֆրանայ հայրը Վարդապետ Երբեքիմ Սեպուհի հետ սրահը կը մտնեն երբեքիմի հետ շատ լաւ կ'ընէն էստեղծը :)

Վ.Ղ.Ր. Բարեկամ, երեկեայ տեսութիւննիս աշխարհի զանազան դարձուածոց վրայ էր. բայց կը հաճի՞ք որ այսօր այնպիսի նիւթի մը դարձընենք խօսակցութիւննիս, որ կիթէ հետաքրքրութեան կողմէն անոնց չը հաւասարի. գէթ աւելի կարեւորութեամբ ու առ մեզ մասնաւոր վերաբերմամբ կրնայ աւելի շահաւոր ըլլալ :

Ս.Ե.Պ. Հրամանացէ՛ք, սրտբաւտ եմ ընտրած նիւթիդ վրայ խօսիլ ու խորհրդածել :

Վ.Ղ.Ր. Իմաստնոց մատենաները և ամեն դարու գիտնական հեղինակները կրնեն թէ՛ ուսմունք ու գիտութիւն ամեն մարդու կարեւոր ու շահաւէտ են, խաշնարած հովիւէն սկսեալ մինչև և Հրովմայ դահուն վրայ բազմող կիտարին, ասիկայ ո՞ր աստիճան ճիշդ է :

Ս.Ե.Պ. Վերջին ծայր ճիշդ է :

Վ.Ղ.Ր. Կրնա՞ս ապացուցանել :

Ս.Ե.Պ. Այո՛, այն հովիւը՝ որ ուսմունք ու գիտութիւն չունենաւ արածելի արօտին բուսաբանական վիճակը գիտնալու և ըստ այնմ՝ իւր հօտը արածելու կարող ըլլայ որ խաշնաբուծութեան արհեստին ու կանոնաց հմուտ չըլլար իւր հօտը տարածամ վտանգներէն ազատելու, անիկայ օրինաբար գիտութիւն չկրնար ընել, և ասկէ դատ մտաւորական դարդացումէ թափուր ըլլալովը ինքն ալ անասնոց

կարգը կիջնայ և իւր արօտականաց հետ խոտ ու բանջար ուտելով կը մուռնի օր մը անասնաբար : Մոյնպէս այն կեսարը կամ տիրոջ մարմինը՝ որ դատողական ակտուն վրայ նստած է, ու դատելու համար իրաւարարութեան և իրաւախոհութեան դասերը չէ սորված, կանոն ու օրէնք չգիտէ, և ոչ նուրբ ու բարակ խելք ունի ինքնօրէն աշխարհավարելու, օրէնքներ դարձնելու, Աստուծմէ իրեն յանձնուած ժողովրդեան նիւթական, բարոյական ու իմացական կեանքը բարելաւելու, անիկայ իրաւամբ կայսր կամ տիրոջ չկրնար ըլլալ, կանոն կամ ուշ կը խայտառակի :

Վ.Ղ.Ր. Եստ լաւ. այս պէտքը մեր արհեստին նկատմամբ ո՞րչափ կարեւոր է :

Ս.Ե.Պ. Մեր և ամեն այն արհեստներուն համար ալ՝ որ զրոց բառով մեքենական կը կոչուին. շատ կարեւոր են ուսումը ու գիտութիւնը. օրինակի համար դարբին մը կամ հիւսն մը կրնայ իւր արհեստագիտութեան միջոցաւ երկաթեայ գործիք մը կամ փայտեայ նիւթ մը ձեւաւորել ու շինել. բայց այն արտադրութիւնն՝ որ կելլէ արհեստագործին ձեռքէն մի մշահն մեքենական աշխատութեամբ, անիկայ վիժած ու անկատար բան մ'է, ընկուզեայ կրկուած տախտակի մը պէս՝ որ վրան արծնուք այսինքն ճիւղ չունի, այն ճիւղն որ պիտի տայ այն տախտակին որ դործը յաճախորդին պտործ ու հաճելի ցուցունէ, արհեստագործին գիտնականութիւնն ու ուսումնական հանճարեղութիւնն է, կամ այսպէս ըսեմ, ուսումը ու գիտութիւնը արհեստին հայեցողական մասն է, առանց որոյ գործնականը թերի է ու անզօր, հայեցողականով կը կատարելագործի արհեստը, անով մարդ օրէ օր իւր արհեստին պակասութիւնները կճանչնայ և զանանք լիցընելու կը յաջողի :

Վ.Ղ.Ր. Եստ լաւ խօսեցաք բարեկամս, երանի թէ ամեն մարդ ձեր այդ համոզումը ունենար, ու արհեստ մը սորվելէն յառաջ քիչ մը ուսմունք ու գիտութիւն ձեռք բերելու աշխատէր :

Ս.Ե.Պ. Ո՛ւր էր կըրայր, մանաւանդ մեր ազգայիններն՝ որոց քով շատ քիչ կամ բնաւ արժէք չունին այս կենսական ու հրաշագործ տարրերը :

Վ.Ղ.Ր. Ուրեմն կը կարծէ՞ք թէ Հայն այսպէս յախտեան տղէտ և անարդ պիտի մնայ :

Ս.Ե.Պ. Իրողութիւնք կը ցուցանեն, մեր ազգը Նրուսայովմի



պրոպագանդիս ակադեմիան քով ընկած անդամայոյժին պէս հիւանդ ազգ մ'է, դժբաղդաբար ոչ տէր ու օգնական ունի որ անոնց օժանդակութեամբը ակադեմիան իյնի բժշկուելու, և ոչ փոյթ ու ջանք կրնէ ինքնամուղ ըլլալ ու աւողջանալու :

Վ.Ղ.Ր. Է'հ. հապա ի՞նչ ըլլալու է :

ՍԵՊ. Խնկացի հեռատեսները հեռու ապագայի մը մէջ հաւանական բժշկութիւնն մը վերապահուած կգոչակեն դմա . բայց նա ինքնազարդիս անմիջական հրաշքի մը՝ այսինքն Յիսուսի մը կրտսրակն որ ցայ իրեն ըսէ և էլ անկողինդ առ ու գնա :

Վ.Ղ.Ր. Հրաշքի դարն անցաւ, հիմայ դործելու դար է :

ՍԵՊ. Այո՛ անցաւ բայց որո՞ւ կը հասկցնեն :

(Այո՛ թիւցին որոյ մը կոտայ նախ մը յետքը, նախկը կոտայ Վարդգէս, Վարդը կառնէ կը բանայ թիւ մը կորրուէ վերը)

Տ Ե Ս Ի Լ Գ .

ՍԵՊՈՒՀ ՎԱՂԱՐՇ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ

Վ.Ղ.Ր. Զարմանք, մենք ինչ կրտէինք, պատանան ինչ բերաւ հանկ :

ՍԵՊ. Աստուած ի բարին դարձնէ, ի՞նչ :

Վ.Ղ.Ր. Մենք հիմայ ուսմունքը կը գովէինք, մեր տղան անկից խոյս կուտայ :

ՍԵՊ. Ի՞նչպէս, ուսկի՞ց եկած է ձեզ այդ նամակը :

Վ.Ղ.Ր. Մեր պատուելի վարժապետէն, կարդամ մտիկ ըրէք, (խիտ բարձր յայնով կորրուէ)

Արդոյ Վաղարշ եղբայր մեր .

Իպրոցիս Բ. կարգի աշակերտ և ձեր դաւակը Պ. Տիգրան այսօր դասը չգիտնալուն համար զինքը քիչ մը գանակոծած ըլլալուս, դպրոցէն թողուց փախաւ :

Կանխաւ գիտնալով ձեր ուսումնասիրութիւնը ու օրինապահութիւնը՝ կը փառանկիմ խնդրել, որ ի պատիւ դպրոցի կանոնաց պաշտպանութեան՝ յիշալը տուն գալուն դուք ևս աղէկ մը յանդիմանէք զինքն ու չափաւոր պատիժ մը տալով առջեւնիդ ձգելով դպրոց բերէք :

Ձեր մտերիմ բարեկամ և գասատու դպրոցին Արթիւր Թովմասեան

Վ.Ղ.Ր. (Թիւ մը խառնակ տնտես կենալէն վերը) Ի՞նչ ընելու է այս անպիտանին, պարոն Սեպուհ :

ՍԵՊ. Տակաւին կը շուարի՞ս, աղէկ յանդիմանութիւնն մը պէտք է տալ իրեն և տանիլ վարժապետին որ նա ալ ուղածին պէս ընէ :

Վ.Ղ.Ր. Աստուծով եղիք, ևս տղի երես խնդացող հայրերէն չեմ, հիմայ գտնամ՝ դիտեմ ինչ ընելիքս, սակայն ա՛հ, ո՞ւր տեղ գտնեմք ո՛ր դիտէ որ ծակը մտաւ :

ՅՈՎ. Ծակերը չէ, հիմայ ևս տեսայ դիմացի փողոցը, կուզէք երթամ կանչեմ :

Վ.Ղ.Ր. Ապրիս որդիս, գնա հոս կանչէ (որան կերնայ) :

ՍԵՊ. Դժուար թէ Տիգրան այդ տղային խօսքով ելլէ հոս գայ :

Վ.Ղ.Ր. Որչափ բերաւ ու յամառ մ'է իրօք՝ սակայն յանձնարինս կը վախնայ ինձմէ, անունս լսելուն անպատճառ կուգայ :

(Իկա՛ թիւցին Յովհաննէսին հետ Տէրտեան որտեղ կոտայ և հօրը առաջը բարեկամին թովը կը կայնէ :)

Տ Ե Ս Ի Լ Գ .

ՆՈՅՆԹ, ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՏԻԳՐԱՆ

Վ.Ղ.Ր. Ծօ՛, դպրոցէն փախեր ևս, պատճառ :

ՏԻԳ. Պատճառը, ևս իրեն դերին չեմ, հողիս կհասաւ, տալու լին աներին խապիլ է քի սախըտար թօքմախ չուտեր, ինչ խրտար քի աս իմ չոր ոսկորներս (կողերը ցոցոցանելով) կերաւ :

Վ.Ղ.Ր. Ծօ՛ ինչո՞ւ պիտի ձեռնէ քեզ :

ՏԻԳ. Չգիտեմ. զարեղ է ինկեր ինձի . ամեն օր կը ձեռնէ ու կը ձեռնէ :

Վ.Ղ.Ր. Սխալ ևս Տիգրան, վարժապետները անիրաւ տեղը մարդու բան չեն ընիր :

ՏԻԳ. Հա՛, չեն ընիր քեզ ալ անանկ խաբեր են :

ՍԵՊ. Կեցիք, ևս դիտեմ պատճառը, այսօր դասը դիտելի՞ր :

ՏԻԳ. Հա՛, իշտէ աղ մանանա կընէ կոր, շատ լաւը գիտելի, բայց է՛հ դիտնամ ալ տէ ինչ :

Վ.Ղ.Ր. Խնկացի մը Տիգրան :



ՏԻԳ. Ամենեւին այսօր խելքս տեղ ըրաւ թէ կարգալուծն տակը պարսպ է :

Վ.Ղ.ՐԵ. Յիմարեցար ծօ' :

ՏԻԳ. Ամենեւին ընդհակառակը աւելի աղէկ հասկցայ որ դուք իմ թշնամիներս էք դպրոց զրկելով զիս . որովհետեւ աշխարհք գրող կարգացողէն պիտի անցնի մէկ մ'ալ գրող կարգացողները անօթի մնան կոր .

ՍԵՊ. Ըսել է դպրոց չպիտի երթաս :

ՏԻԳ. Ի՞նչ կըսէք , ծերութեանս անօթի՞ մնամ :

ՍԵՊ. Հապա ի՞նչ գործ պիտի ընես :

ՏԻԳ. Ինչ ալ ըլլայ պիտի ընեմ , միայն թէ դպրոց չերթամ :

Վ.Ղ.ՐԵ. Մօ գիտես հիմայ գլուխդ կը կտարեմ հա , խելքդ վրադ ժողով :

ՏԻԳ. Պապա ճարը չիդայ դուխս կտարել չէ , կուզես զիս կրակը ձգէ , չեմ երթար , չեմ երթար :

Վ.Ղ.ՐԵ. Անիծեալ , նորէն այդ խօսքին վրայ ես ( էլե՛ս ու փոյրք կտո՛ւ , Տէրբուն Տէկ կոզ կտո՛ւ ու Սեղան Վարդէին թե՛ն բռնելով կնեռացնէ րեւորանն , և իրին Տէրբունայ ու՛մ քաւէ , այս Տէրբուն Յովնանն ալ կերնայ . )

Տ Ե Ս Ի Լ Ե .

ՍԵՊԱՆՆ ԵՒ ՏԻԳՐԱՆ

ՍԵՊ. Պարոն Տիգրան եկու յամառութիւն մ'ընեք , աստանային խաբուեցայ ըսէ , ու ել կրկին դպրոց գնայ :

ՏԻԳ. Չեղած բան է , դու մ'ընեք :

ՍԵՊ. Կը գղջաս սղաս . հիմայ սղայ ըլլարովդ խելքդ չհամիր , բայց վերջը արբունքի համեմտող պիտի իմանաս դպրոցի օգուտները թէպէտ այն ժամանակ ձեռքերդ գլխուդ զարնելով պիտի զղջաս այս քրածներուդ համար , սակայն վերջին զղջալդ օղուտ չընեք :

ՏԻԳ. Ամենեւին մի՛ ստիպիր , զիմանամ հողիս ելլելը , ալ ինձ համար դպրոց երթալ չկայ , ըսէ հօրս թող ինձի զէնահաթի մը տայ :

ՍԵՊ. Ի՞նչ արհեստի կրնաս մանկ :

ՏԻԳ. Դուք գիտէք :

ՍԵՊ. Դերձակութեան կուզե՞ս երթալ :

ՏԻԳ. Դերձակութիւնը ի՞նչ է :

ՍԵՊ. Թէրգութիւն :

ՏԻԳ. Մի՛ , այդ իմ գործս է , նայէ թէ ինչպէս քիչ օրէն արհեստը ոտիկ պիլէգիկ ըրած թեւս կանցնեմ , թող այն ատեն հայրս կանակը բարձին զնէ կեանքին նայի , ես վաստակիմ ինքը ուտէ , զըզրոց երթալի տէ ինչ պիտի ըլլար ամէն ատեն թղթի փորձ տուր , զրքի փորձ տուր , չգիտեմ ինչի փորձ տուր , տուր տուրով քէտէն փարս չէր մնար , Ֆայտան ինչ , փէք փէք սորվելիքս քերականութիւն մ'էր , է՛ն ատկից ալ ինչ կըլլայ , ուղական բան սեռական բանի գարնասօսքի մենծը . ասոնք թէ՛ր սքմէք ծիին տամ պատառ մը հաց կուտայ , կամ խասապին ըսեմ կտոր մը միս կուտայ , անանկ չէ ճանդմ , գէշ կը խօսիմ նէ զարկ դիտուս :

ՍԵՊ. Միտը ես սիրելիս սիտը , իրաւ արհեստը օգտակար բան մ'է և մարդը սպրկեցնելու բաւական միջոց մը , ըստ հասարակաց առածին թէ՛ ճարկ ալբիւր մըն է , շայց ուսմունքն ալ օգտակար է և աւելի կարեւոր մարդս ի՞նչի ապրելիցնու համար . որովհետեւ ուսմունքը կատարելագործող մը ինչ գործի և ինչ պաշտօնի վրայ ալ ըլլայ , ինչպէս դու կը կարծես , ամենեւին անօթի չմնար այլ փառաւոր ու պատուով կապրի իւր քովերը եղող տգէտներուն մէջ , և ուսեալ մէկը երբ արհեստի մը զիմէ , այն արհեստը խիստ զիւրաւ կը սորվի և կը կատարելագործէ , մինչդեռ անուսը խիստ ուշ և դրժուարաւ կը սորվի և սորվելէն վերջ իւր սորվածին վրայ կը մնայ , գիտցիր զայս ալ որ՝ թէպէտ ուղղական բան սեռական բանին հացագործին կամ մասլաճառին ըսելով կտոր մը հաց կամ միս չառնուիր , բայց դու քերականութեան այս նախադրանէն մտնելով և իւր բովանդակ արտեստը կատարելագէտ սորվելով կրնաս պատառ մը հայէ և կտոր մընէ աւելի շահիլ , քերականութիւնը գիտութեանց հողերու արձ ու անմահարար զբախտին փակ ու կղպակեալ զբան բանալին է , որոյ միջոցաւ թափելով հասարակ կարգի մարդոցս մուտքը արդիւող այն թանձր ու հաստապինդ փականքն ու կղպանքներ , կը մտնենք հոն և անտի զանազան ծառերէ և թուփերէ անուշ անուշ պտուղներ կըբաղենք , յօգուտ և ի պէտս մեր կենաց և ի զուարճութիւն անձանց , զն ուրեմն եկուք ձգէ այդ ծուռ ու մահաբեր գաղափարներդ ու ել զարձեալ դպրոց գնայ :

ՏԻԳ. Բնաւ երբէք , իմ զէնահաթս թէրգութիւն պիտի ըլլա



ասկէ վերջը , գնայ հօրս ըսէ ինձի աղէկ վարպետի մը քով տայ :  
 ՍԵՊ. Մեղք կընես ապագայիդ և այդ մեղքին ես ու հայրդ ալ  
 կցորդ կըլլանք :  
 ՏԻԳ. Ամենակն , դուք վարձք մը ըրած կըլլաք ինձ ասով :  
 ՍԵՊ. Կը հարկադրէս զմեզ պարոն , արիւն քո ի դուռն քո ը-  
 սել ու ձգել :  
 ՏԻԳ. Այո՛ , ձգեցէք դուք ես աղէկ կըլլամ :  
 ՍԵՊ. Ըսել է երթամ համեղեմ հայրդ :  
 ՏԻԳ. Այո՛ , քեզ տեսնամ համեղեմ նէ զիտես ես՝ հողի մը ա-  
 դատած կըլլաս . ( Սեպտեմբերին ) :

Տ Ե Ս Ի Լ Զ

ՏԻԳՐԱՆ ( աստուծոյն )

ՏԻԳ. Ինատիս զավի եմ , թուքի չեմ լզեր , ալ ասկէ վերջը եր-  
 կինքէն Աստուած իջնայ դարոց չեմ երթար , թէրդուրեան կերթամ  
 ի՞նչ աղէկ պաշտօն , ատեն մը ինձի կարել չկայ , ըռահատ կը նքա-  
 տիմ վարպետիս մէկ կողմը՝ աղւոր չարչին սէյր կընեմ . աղէկ բան  
 մ'ալ կայ , նոր գագած աշկերտները վարպետները գործի կը բանե-  
 ցընեն , կերթամ վարպետիս տուն ջուր կը կրեմ , տղայ ունի , տղան  
 կը պորտոցունեմ , թէր եկմի , բան մ'ալ խանութէն տուն խրկէ , ան  
 ալ ես կտանի՛ , վրայէն քիչ մ'ալ ուտեմ , ինչ յայտնի . օ՛րս կեանք  
 տայ կեանք , է՛ն կար կարելու ատենն ալ կայ , Աստուած ողորմած է :

( Այս ժեջնի կոտորեմ վաղարչ և Սեպտեմբերին աստուծոյն լըստ կը նստին : )

Տ Ե Ս Ի Լ Է

ՍԵՊՈՒՆՆ ՎԱՂԱՐՇ ԵՒ ՏԻԳՐԱՆ

ՎՂԱՐՇ. Տիգրան դպրոց չափաի երթաս հիմայ :  
 ՏԻԳ. Չէ հայր իմ չէ , մեռցնես ալ զիս ան չար վարժապետին  
 Թրեսը չափաի տեսնամ :  
 ՎՂԱՐՇ. Գլուխդ ելլելիք կայ տղայ :  
 ՍԵՊ. Չդէ բարեկամ , արդէն այս տխուրը դպրոցին օղուս մը  
 չունի և չափաի ունենայ ալ . եօթը տարի է դպրոց կերթայ , գլու-  
 իտկէ չիտակ Սաղմոս մը չկրնար կարգալ , եկուր ասնք արհեստի մը

Թող գէթ արհեստ մը սորվի :  
 ՎՂԱՐՇ. Տանք , բայց արհեստին մէջ ըլլալիքը այդ չէ՞ :  
 ՏԻԳ. Չէ հայր , արհեստս ջանք կընեմ սորվելու :  
 ՍԵՊ. Է՛ն ինչի տանք քեզ , ի՞նչ բան դիւրու կընաս սորվիլ :  
 ՏԻԳ. Թէրդուրեանը ամենէն աղէկ է :  
 ՎՂԱՐՇ. Աղէկ գէշ , վերջը յայտնի պիտի ըլլայ , բայց քու հաստ  
 ու զըղում գլխիդ բան մը օղուս չունի :  
 ՍԵՊ. Յոյսդ այդպէս արմատէն մի կտրեր պարոն Վաղարչ ,  
 Աստուծով լաւ կըլլայ մտածէ արդ ո՞ր վարպետին տանք զայն :  
 ՎՂԱՐՇ. Դուք գիտէք :  
 ՍԵՊ. Դերձակ Յակոբը ամենէն աղէկ է ըստ իս :  
 ՎՂԱՐՇ. Ինքը լաւ ըլլայ . բայց քայէ այդ մարդը ծանօթ է մեզ  
 անոր յանձնենք այս անպիտանը : ( Կը ժեջնի երեւոյ ժեջն )

Տ Ե Ս Ի Լ Ը

ՌՈՒՐԷՆ ԱՐՇԱԿ ՎԱՆԱՆ ՍՄԲԱՏ ՆԵՐՍԵՆՆ ՏՐԱՆ

( Դպրոցի վեց աստուծոյ աշակերտներ սրահը կը մտնեն և իրարս-  
 դիմաց նստելով կեկին խօսակցիլ հանրապար կերպով )

ՎԱՆ. Պարոն Տիգրան հօրն ալ դիմադարձիր է ու ալ դպրոց  
 չափաի գայ եղեր , իմայա՞ք :  
 ԱՐՇ. Հողիդ սիրես պարոն Վանան , այդ անպիտանին անունը  
 մէջ մի բերիր :  
 ՆԵՐ. Ուրախ եմ , որ դպրոցէն ելաւ , որովհետեւ դասերս ալ  
 ետք չեն մնար :  
 ՌՈՒՐ. Ատանկ ալ հաստ գլուխ ու բլամիտ մարդ չէր ըլլար  
 բան մը հազար անգամ ըսուելու էր որ հաղիւ գլուխը մանար :  
 ՏԻՐ. Ձգնեք այդ խօսքերը եղբարք իմ , վաղուան դասերնիս  
 ո՞րն է անոր վրայ քիչ մը խորհրդածութիւն ընենք :  
 ԱՐՇ. Ո՞ր դասերնիս :  
 ՏԻՐ. Բարոյակոն իմաստասիրութեան :  
 ՍՄԲ. Վաղը պիտի իմաստասիրենք թէ ի՞նչ է մարդ :



ՆԵՐ. Ո՞վ չգիտեր թէ ինչ է մարդ :

ԱՐՇ. Այդպէս չէ, պարոն Ներսէն, պիտի իմաստասիրենք թէ ի՞նչպէս բան է մարդ ըսածնիս :

ՎԱՀ. Շնչաւոր կենդանի էակ մը իմացած եմ ես :

ՍՄԲ. Ըսել է մարդ կենդանեաց կարգէն է :

ՎԱՀ. Այդ չգիտեմ, միայն թէ դասատուն անցեալ օր այսպիսի խօսք մը բերնէն հանեց :

ՆԵՐ. Ես ալ այնպէս կը հաւատամ որ, մարդ ըսած էակնիս կենդանեաց մէկ ազնիւ տեսակն է, քանի որ մենք ալ անոնց պէս կուտենք, կը խմենք, կը քաղնք և կը ննջմք :

ՌՈՒԲ. Սխալ կտրամաբանեա պարոն Ներսէն. թէպէտ մարդն ալ կենդանեաց նման կուտէ, կխմէ. կը քաղէ և կննջէ, բայց ասոնցմով անոնց տեսակը եղած չըլլար, անիկայ բարձր և զերազոյն առանձնաշնորհութիւն մը ունի, որ զինքը անոնցմէ կզատէ :

ՆԵՐ. Ի՞նչ առանձնաշնորհութիւն :

ՌՈՒԲ. Աստուծոյ պատկերը՝ որ զմարդ յԱստուածնմանութիւն կը բարձրածնէ :

ՎԱՀ. Ատիկայ մարդուն ի՞նչ կարողութիւններ կուտայ :

ԱՐՇ. Այն կարողութիւնները՝ որոնցմէ անասունք զրկուած են :

ՏԻՐ. Ի՞նչպիսի բաներ :

ԱՐՇ. Խորհել, դատել, ճանաչել, յիշել, բաղդատել և ուրիշ շատ մը կարողութիւններ :

ՏԻՐ. Այդ կարողութիւնները չունի՞ն անասունները :

ՍՄԲ. Ոչ, անոնք զգալ մը միայն ունին, որ իրենց գոյութեանց մէկ հարկաւոր պէտքն է, և բնական ազգում մը՝ որ բնութենէն տրուած է ամէն մէկ տեսակին իրենց անձնիւր մասնաւորութեանց համաձայն :

ՆԵՐ. Մարդիկ յիշեալ կարողութիւններով ի՞նչ բարձր և բացառիկ գործեր կրնան ընել :

ՍՄԲ. Խորհելու կարողութեամբ կը խորհին, ինչպէս անտեսագէտ մարդիկ իրենց ապագայն կարողութեամբ կը գտան, ինչպէս տէրութեանց դատաւորները մարդու մը արդարութիւնը կամ անիրաւութիւնը ճանաչելու կարողութեամբ կը ճանչնան. ինչպէս պատկերահանք գոյնի մը կարողութեամբ կը յիշեն, ինչպէս զպրոցի տղաք իրենց ժամանակ յտաջ առած դասերն բալլատելու կարողութեամբ

կը բաղդատեն, ինչպէս երկու երկրագործ իրենց եղները, այս կարողութիւնները ունի՞ն անասունները :

ՏԻՐ. Այո չունին, և հիմայ աներկումն համոզուեցայ, թէ մարդն իրօք զերազանց և բարձրագոյն էակ մ'է քան զանասունս, սակայն կուզեմ զայս ալ հասկնալ թէ այս կարողութիւնները բնութենէն ամէն մարդու հաւասարապէս տրուած են թէ ոչ :


ԱՐՇ. Այո պարոն Տիրան, ամէն մարդ բնաւորապէս ընդունակութիւն ունի այս կարողութիւնները ունենալու, բայց անոնց արտադրութիւնն ու փայլումը ոչ ամենուն համար հաւասար է, այլ տարբեր յայս ոք, քան յայն ոք, այսինքն ամէն մարդ կրնայ խորհիլ, դատել ճանաչել, յիշել, բաղդատել, սակայն Ղուկասը Պօղոսէն աւելի կրնայ ուղիղ խորհիլ, ճիշդ դատել, յստակ ճանչնալ, լաւ յիշել և աղէկ բաղդատել :

ՎԱՀ. Շատ լաւ, այդ էր իմ փնտած կէտս, Ղուկասին Պօղոսէն աւելի ուղիղ խորհիլ, դատել ու ճանաչելը ի՞նչէն է, իւր ապրելու կերպէ՞ն թէ Աստուծոյ մէկ բացառիկ առանձնաշնորհութենէն եթէ վերջինը պիտի ըլէք, ուրեմն երկնից արդար նախախնամութեան դէմ՝ եմ որ իւր արեգակը չարերուն աւ բարիներուն վրայ հաւասարապէս կը ծագէ, հակառակ դիտողութիւն մը ընել պիտի հարկադրէք զիս :

ՌՈՒԲ. Ոչ, մի խաբուիր եղբայր, Աստուծոյ նախախնամութիւնը յաւէտ և յամենայնի արդար է որ իւր շնորհը ու պատկերը հաւասարապէս տուած է և կուտայ ամենուն, և չխորեր զայս մարդ ու զայն մարդ, միայն հոգւոյ այն զարգացումը որ Ղուկասը Պօղոսէն աւելի կրնէ, մասնաւոր աշխատութեանց արդիւնք է :

ՆԵՐ. Ի՞նչ կըսէք, հոգւոյ զարգացումը ի՞նչպէս աշխատութեամբ կրնայ ըլլալ :

ՍՄԲ. Այո՛, և շատ իրաւամբ, որովհետեւ ինչպէս ամենիմաստ Արարչին մի իմաստուն կարգադրութեամբ աշխարհի շատ մի պտտուական ու յարդի նիւթերը ի թաքտի կամ զանազան թանձր ծածկոցներու մէջ պահուած են, մարդոց զժուարամատչելի ըլլալու և կամ թերեւս աշխատութեամբ վայելելու համար. ինչպէս մարդարիան ծովի խեցեմորթներու, ազամանդն քարերու ու սակին զանազան խտունուրդներու մէջ անանկ ալ հոգին իրեն զերազանիս և պատուականազոյն նիւթ մը զանազան խաւերու ու մարկերու մէջ զտեղուած





է, այնպէս զի եթէ որ և է մէկը այդ խաւեր ու մտչկեր վերցնելու աշխատութիւնն չունենայ, չկրնար հողւոյ նորոթիւն կամ զարդացում ունենալ :

**ՆԵՐ.** Այդ նմանութիւնը քիչ մը ծանր մօտեցաւ հասկոցորութեան, կրնա՞ք եղբարք իմ ուրիշ կերպով հասկցնել ինձ հողւոյ զարդացման աշխատութեան կարօտ ըլլալը :

**ԱՐՇ.** Հողին աւելի ճշդութեամբ կը նմանեցուցուի խոպան ու անուշակ անդատանի մը, որ յաւիտեան չարդիւնաւորեր, եթէ երկրագործութեան արհեստին բոլոր նախնական ու կարեւոր զոհողութիւնները չըլլար անոր վրայ :

**ՎԱՃ.** Արտի մը արդիւնաւորութեան միջոյնները լսած եմք, կամ գիտենք պարոն Արչակ հողւոյ զարդացման զաղտնիքը դու ըսէ մեզի :

**ԱՐՇ.** Հողւոյ զարդացումը գաղտնիք մը չունի, ճիշտ արտի մը մշակութեան պէս պէտք է գայն մշակել, այսինքն նախ զտել ու մաքրել հողին բնական ազդմամբ և կամ յոռի կենցաղափարութեամբ ունեցած նախապաշարեալ ծուռ ու վատթար գաղափարներէն, յետոյ քերականութեան արօրով հերկել և կակղել ըղեղի թանձր կոշտերը, հուսկ յետոյ ցանել անդ ուսմանց ու գիտութեանց սերմը ի տղաբերութիւն :

**ՎԱՃ.** Աղէկ համոզուեցաւ միտքս, բայց աղէկ, Աստուած հոռ գործ չունի :

**ՎՈՒՐ.** Ի՞նչպէս :

**ՎԱՃ.** Արտի մը արդիւնաւորութեանը համար որչափ որ արտաքին մշակութեան կարեւոր գործողութիւնները անհրաժեշտ են, սակայն աւելի Աստուծոյ ողորմութիւնը ու բարերար կամքը կպետի, առանց որոյ հազար մշակել անօգուտ են, արդ հողւոյ մշակութեան մէջ Աստուծոյ այս ողորմութիւնը ու բարերար կամքը տեղ չունի կրէք :

**ՌՈՒՐ.** Ինչպէս կարծիքներ կ'ընանս, պարոն Վահան, առանց Աստուծոյ կամաց տերու չչարժիր կըսեն, լսած ետ անշուշտ, սոցնպէս ալ առանց այդ գերագոյն էակին կամաց ու ողորմութեան ոչ երկիր կարդիւնաւորի, ոչ ծառ կպտղաբերի և ոչ ծաղիկ կծաղկի, սակայն Արարչապետական յատուկ գիտմամբ մը Աստուած բանական մարդ բացառելով մը ազատած է այս հարկադրեալ դասաւորութեանն, գայն ինքնիշխան և ազատ ստեղծելով, որով մարդ ինչ որ կը գործ

ծէ իւր ազատ և անձնիշխան կամաց արտադրութիւնն է, և ոչ պարտաւորիչ ու բռնադատող հարկի մը կրաւորական հետեւութիւնն՝ որոյ հլու ենթակայ են բոլոր շնչաւոր ու անշունչ դոյացութիւններն : Այսպէս ալ հողւոյ մշակութիւնը՝ որ սուղ և երկար աշխատութեանց արդիւնք է, Աստուած ի վերուստ հրաշալիօք չդործել յայտ ոք և յայն ոք . այլ աշխատութեամբ և եթ կ'հնաւորի և աշխատողն կառնէ պտողն ու պսակն :

**ՆԵՐ.** Լաւ, պարոնայք, հողւոյ մշակութեան աշխատութեամբ կատարուելուն վրայ ամենքս ալ համոզուեցանք կարծեմ, հիմայ քիչ մ'ալ մշակութեան արդիւնքին վրայ խորհինք :

**ՄԱՐ.** Ի՞նչ ըսել կուզես :

**ՆԵՐ.** Ընել կուզեմ թէ մարդ մշակելով իւր հողին ի՞նչ օգուտ ունեցած կըլլայ :

**ՏԻՐ.** Այդ ալ բաւական պիտանի կէտ մ'է աչքէ անցնելու որովհետեւ մարդը մարդ է, և ահա կը տեսնեմք որ հողի մշակողը ու չմըշակողը աշխարհի մէջ միեւնոյն ընթացքով միեւնոյն յարգաւորութեամբ միեւնոյն բաներով կեանք մը վարելով, միապէս կը մեռնին, արդ ո՞ւրտեղ է ասոնց տարբերութիւնը առաջնոյն օգուտը և վերջինին մէտար :

**ՄԱՐ.** Սխալ ու մեղադրելի համոզում, մանաւանդ քեզ համար պարոն Տիրան, որ դպրոցի աշակերտ մ'ես, ու միտքդ մշակելու ձեռք զարկած, մարդը մարդ է կրօես . այդ իրաւ է բնական կատարելութեանց կողմէն, իսկ հողւոյ զարդացման կողմէն ի՞նչպէս կըրնան միեւնոյն ըլլալ, այս կէտը փորձէ անգամ մը քու վրայդ, դու մարդ էիր ասկէ հինգ տարի յառաջ, ինչպէս հիմայ ալ, բայց խորհէ քու վրայդ և տես թէ անցեալ և այժմու կեանքդ մի՞ էն . դու ատեն մը՝ այն է հինգ տարի յառաջ իբրեւ մարդ անուս և տղէտ չկրնալով բարձրերը խորհիլ, մտածութեանդ հորիզոն մինչև կերլեաց ու դեանաքարչ հաճոյի՞ սահմանը հաղլու կտարածէր, սակայն հիմայ քո միտքդ խիստ վերերը կը պտըտին, շատ բան կրնաս խորհիլ, շատ հանճարեղ դատողութիւններ ընել, այն ատեն միայն մարմին կապրէիր, այժմ կատարեալ հոգեղէն էակ մը կը պարծիս, որով նիւթական հացը կ'իտողուս, Աստուծոյ բանը կը գրկես, անբանական հաճոյքը կ'ըզես բանաւոր ու վայելուչ դրօսանքներու ետեւէն կը քալես, դայալականներէն խոյս կուտաս իմանալիները կը շօշափես, երկիրը կ'մոռնաս :



երկինքը կը խօրհիս , անցաւոր ու եղծականներէ խոյս կուտտա , մնա-  
յունն ու անեղծականն կենդրեա , ի՞նչ է այս քու մէջ քեզմով կա-  
տարուած արագ փոփոխութեանը պատճառ . եթէ ոչ հողւոյ մշակու-  
թիւնը :

**ՆԵՐ.** Շատ լաւ , պարոն , հաւատանք այդպէս ըլլալուն , բայց  
կրնա՞ք բացարձակ վճռել թէ՛ հողւոյ մշակութիւնէ՛ զուրկ մէկը՝ խել-  
քէ մտքէ ալ թափուր , միմիայն զգայական կենօք ու բնութեան ազդ-  
մամբ վարելի կենդանի մի է :

**ԱՐՇ.** Լու՛ր , պարոն պատասխանեմ ես քեզ , հողւոյ մշակու-  
թիւն ըսածնիս քանի մը կերպ է , մէկ մը դպրոցի մէջ ուսման կար-  
գաւ աստիճանաբար գործուած , մշակութիւնը՝ որ բուն և օրինաւոր  
մշակութիւն է . միւսը քաղակիրթ և բարեկենցաղ ընտանեաց  
կամ ընկերութեան մէջ ապրելով ու անոնցմէ տեսնելով ու  
օրինակելով հողւոյ աստիճան մը ցոյց առած արգասաւորութիւնը որ  
երկրորդ կարգի մշակութիւն կը սեպուի , կայ մշակութիւն մ'ալ՝ որ  
զանազան բունի միջոցներով այն է ըսպառնալեօք , փայտով , կապան-  
քով և այլ և այլ նեղատիր հարուածներով կըլլայ , արդ այս երեք  
կերպ մշակութիւնէն բնաւին զուրկը բացարձակապէս մարդկային դէմ-  
քով կենդանի մի է կրնամ ըսել :

**ՎԱՀ.** Կաղաչեմ այդպիսի անձ մը նկարագրեցէք տեսնալք :

**ՌՈՒՑ.** Վայրենի մարդիկ ընդհանրապէս այս կերպէն են . թէպէտ  
քաղաքակիրթ ազգաց մէջ ալ ոչ սակաւք կը դանուին , սոքա խաղառ-  
հողւոյ գործունէութենէ զուրկ՝ միայն զգայական ու տնական կենօք  
կվարին , այնպէս զի իրենց բոլոր մտածութիւնը ապրիլ մըն է : Բոլոր  
հողերը անասնական հաճոյք և հեշտութիւն մը վայելի . չգիտեն թէ  
ինչու համար ստեղծուած են . ի՞նչ են , ի՞նչպէս պիտի ապրին և ի՞նչ  
պիտի ըլլան . ճիշդ կենդանիի մը պէս կուտեն կիսմեն կը ննջեն կքա-  
լին և յայտ միայն կճանչնան մարդկային կոչում և արժանապատուու-  
թիւն , անոնց համար ոչ կարգ կայ ոչ օրէնք , ոչ պարտք ոչ իրա-  
ւունք ոչ պատիւ ոչ սրբութիւն , հասրա ամեն բան խառնիխառն ,  
պարտքը ու իրաւունքը հզօրին գուլն է , պատիւը Աստուծոյ կվե-  
րաբերի , սրբութիւնը երկնային մարդոց կը յատկացնեն և այսպէս մարդ  
կծնին անասուն կապրին , բանաւոր աշխարհ կուգան , անբան կմեռ-  
նին , խոտի պէս կբուսնին խոտի պէս կչորնան :

**ՆԵՐ.** Է՛յ , այդպիսի մարդիկ դատաստանի ատեն Աստուծոյ առ-

ջեւ ո՞ր աստիճան հաճոյ կամ անհաճոյ պիտի կրնան ըլլալ :

**ՍՄԲ.** Ատոր ճշմարիտ պատասխանը Աւետարանի մէկ առակէն  
բացայայտ կրնանք առնել , մարդ մը՝ կըսէ հոն , օտար աշխարհ գնալ  
պարտաւորեցաւ և կանչելով իրեն ծառաները , մէկին հինգ քանքար  
առաւ , մէկին երկու մէկին մէկ ու գնաց . ժամանակ մը վերջը  
դառնալով , ուղից համար առնուլ ծառաներէն՝ և մէկիկ մէկիկ կան-  
չելով քանքարները պահանջել անոնցմէ , և ով որ առած քանքարը  
չանովը բերաւ իւր առջեւը . սիրեց այն ծառայն և զովելով ըսաւ  
« մուտ յուրախութիւն տեսուն քո » բայց ով որ առած քանքարը հո-  
ղին մէջ պահելով չչահեցուց ու լոկ քանքարը բերաւ տիրօջը , բար-  
կացաւ անոր ալ վրայ տէրը ու ըսաւ « տարէք դէա ի խաւարն ար-  
տաքինս » : Այսպէս տիեզերաց արարիչը ամէն մարդու զատ զատ  
հողի միտք և տաղանդ տալով հրամայած է զանոնք չահեցնել ու ար-  
դիւնաւորել . և ով որ հողին մշակելու աշխատելով կարողնաւորէ  
առած տաղանդը մէկին մէկ , կամ մէկին երկու , աւելի կամ նուազ  
այնպիսին սիրելի է յաչս տեսուն , բայց ով որ ծուլութեամբ ու ան-  
հողութեամբ առած քանքարը մտաց զանազան ծածկոցներու մէջ կը  
պահէ ու չարդիւնաւորէր , այնպիսին տակի և դատապարելի է առաջի  
Աստուծոյ . և պիտի լսէ այն յանդիմանութիւնը զոր ըսաւ տէրը քան-  
քարաթաքոյց ծառային :

**ՏԻՐ.** Բաւական ժամանակ անցաւ եբայրներ , կարծեմ ըստ կա-  
րի հասկցանք և հասկցուցինք հողւոյ մշակութեան օգուտները , արդ  
կրնայ մեզ մեր ըսածներուն տէրն ըլլալ և ասաց ու արարի սկզբուն-  
քով աշխատիլ մեր հողիները մշակելու :

**ՆԵՐ.** Այո՛ այո՛ , պիտի աշխատինք որ մարդ կոչուելու արժա-  
նաւոր էակներ ըլլանք :

**ԱՐՇ.** Երանի՛ թէ , տարի մը յառաջ ունենայի այս համոզումը  
գէթ քիչ մը աշխուժիւ կաշխատէի :

**ՎԱՀ.** Տակաւին տղաքներ ենք . եղբայր իմ , շատ ժամանակ  
ունինք աշխատելու , կամք ջանք և յարատեւութիւն ըլլալէն վերջ  
մեզմէ բան չսրակսիր .

**ԱՐՇ.** Իրաւ ինչ ազգու ու անվրէպ միջոցներ ամէն դժուարու-  
թեանց յաղթելու համար , կամք ջանք և յարատեւութիւն :

**ՏԻՐ.** Աստուծով , պարոն Արշակ , այդ զօրաւոր կարողութեանց  
վրայ ալ ուրիշ ատեն պատեն պիտի ունենանք երկար վիճաբանելու :



սակրայն եղբայրներ եկէկ հիմայ ասկից երթանք , որովհետեւ վաղուան համար այս օրուընէ պատրաստելիք շատ դործեր ունինք :

**ՍՄԲ.** Այո՛, այո՛, երթանք , բայց միայն չէ՞ք հաճիր որ չբաժնուած սիրոյ երգ ՚ը երգենք մեր եղբայրական սիրով հոռ հաւաքուելուն ի յիշատակ :

**ՆԵՐ.** Ամենայն հաճութեամբ : (Կիւնն հետեւեալ երգը երգելու :)

### Ո Ւ Խ Տ Ք

## ՀԱՅ ՊԱՏԱՆԵԱՑ

Պայծա՛ռ արեւ , երկի՛նք անհուն ,  
Վըկա՛յ եղիք մեր ուխտերուն :

Յորչափ արովի սիրա ի մեր լանջ ,  
Աչք մեր արփոյն տեսնեն ձաճանչ ,  
Ով Հայրենիք , ուխտեմք նուէր  
Հանել քեզ մեր կննայ օրեր :

Պայծա՛ռ արեւ , երկի՛նք անհուն :  
Վըկա՛յ եղիք մեր ուխտերուն :

Ի՛նչ որ կուտնիմք , ի՛նչ լոյս որ մեզ  
Կուտայ դպրոց , զայն ձօնել քեզ  
Վ՛ուխտեմ , և քո մի՛թին զիշեր  
Փարատելու լինել աստղեր :

Պայծա՛ռ արեւ , երկի՛նք անհուն ,  
Վըկա՛յ եղիք մեր ուխտերուն :


**ՌՈՒԲ.** ( Լճնափ Չէրջ ) Հրամանցէք եղբայրներ :

**ՎԱՀ.** Շատ աղէկ երթանք : (Կիւնն իւրեքու երթալու :)

(Տեսարանը կը խորանայ)



## ՊԱՏԿԵՐ Ա.



( Դերյուկ Յակոբը սեղանին առջև նստած իւր իւրովը կը բարձրէ , և ահա իւրեքու վաղարջ Սեպուհ և Տէքրան , առաջին երկուսը կնարին իւր Տէքրան որտէ իւրայ կեցած : )

### ՏԵՍՒԼ Ա.

ՎԱՂԱՐՇ ՍԵՊՈՒՀ ԵՒ ՏԻԳՐԱՆ

**ՎՂՐՇ.** Բարեւ վարպետ : ( Նստիլէ յառաջ )

**ՅԱԿ.** Աստուծոյ բարին , հրամանցէք :

**ՍԵՊ.** ( Բիչ իւր արեւ լուս կնարելու Չէրջ ) Գիտէ՞ք եղբայր , բարի համբարը մազնիս մէ որ ուրիշները իրեն կը քաշէ :

**ՅԱԿ.** Իրաւունք ունիք :

**ՍԵՊ.** Իւ ահա դմեղ ձեր քով քաշող բերողը ստակապէս ձեր բարի համբարն է կհաւատա՞ք .

**ՅԱԿ.** Անարժան եմ ես , սակայն հրամանցէք ի՞նչ է փափագնիդ :

**ՎՂՐՇ.** Փափագնիս այս տղուն ( Տարեանիչ ցոացանելով ) ձեր շնորհիւ արհեստ սորվելն է , պիտի հաճի՞ք զայն ձեզ աշակերտ ընդունիլ :

**ՅԱԿ.** Իրաւ որ աշակերտ պահելէ ձանձրացած եմ եղբարք իմ , բայց քանի որ ձեր աղնուութիւնը կփափագի թող նստի :

**ՎՂՐՇ.** Ապրիս , շնորհակալ ենք , սակայն սա միայն կաղաչենք որ դա ինքն ի ընէ յամառ կամացը ու հաճոյիցը մեծցած տղայ մէ . աշխատիք որ հոս ձգէ այդ հին ընթացքը և օրէնք ու հպատակութիւն ձանձնայ :

**ՅԱԿ.** Տեսնո՞ կոր ( Կանգանը յետը աւելով ) Ասիկայ մէկ երկուս մը զլսին իջածին պէս՝ կամք , հաճոյք , յամառութիւն բան չմնար քովը :

**ՏԻԳ.** ( Անորին դառնալով ) Ի՞նչ , հոս ալ կայ եղեր ծեծը :

**ՍԵՊ.** Ի՛նչ , բաւ ամենայնի տղան քեզի ու քո խնամոցդ կը յանձն



հնամբ, այնպէս զի հողին ու մարմինը քեզի ըլլայ, զիակը ու կաշին մեզ զրկէ :

- ՅԱԿ. Ապահով եղիք, ձեռքէս եկած ջանքը չեմ խնայիր :
- ՎՂԵ. Ծօ, ձեռքը պագ վարպետիդ (Տէգրան կոտայ, կոտայնէ) :
- ՅԱԿ. Նստիր՝ (կոտայնէ) :
- ՍԵՊ. Է՛հ ուրեմն ծառայ եմք ըսելով: Ել Դիմի :

(Դերձակ Յակոբն ու Տէգրան Կոտայնէն մտաւ)

Տ Ե Ս Ի Լ Բ.

ՅԱԿՈՅ ԵՒ ՏԻԳՐԱՆ

- ՅԱԿ. Անունդ ի՞նչ է. պարոն :
- ՏԻԳ. Իմ անունս :
- ՅԱԿ. Քեզի հետ ասանկ պիտի խօսինք, մէկ խօսքը երկու անդամ պիտի կրկնենք :
- ՏԻԳ. Անո՞նս Տիգրան :
- ՅԱԿ. Բո՞նէ սա ասեղը (Վարպետը շեռակէն յետոյ) :
- ՅԱԿ. Սորվեցա՞ր :
- ՏԻԳ. Ի՞նչ, ասե՞ղ բռնելը :
- ՅԱԿ. Է՛հ, աղէկ գտանք մեր պէյան, ձգէ ասեղը ձեռքէք, նորէն բռնէ, (Տէգրան կնիկն ու նորէն կնիկն ասեղը բոյս օրու,
- ՅԱԿ. Իրաւ, բխամիտ ես եղեր :
- ՏԻԳ. Ձէ վարպետ, ինձի պէս խելացի չկայ :
- ՅԱԿ. Է՛հ, տարագ առինք շատ մի խօսիր, բռնէ՛ սա ասեղը կնիկն շեռակէն մը յետոյ կոտայ ձգէ վար կը յնէ կրկին բռնէ ասեղը կնիկն բոյս օրու յետոյ ծառայումս :
- ՅԱԿ. Ծօ, կրեք անգամ եղաւ, նորէն շորվեցար. քեզի ի՞նչ պէս հասկըցնեմ. կըսէ եւ ասեղը յետոյ կնիկն :
- ՏԻԳ. Ո՛ւյ, ո՛ւյ, ո՛ւյ, մէյէր ատէկը ասանկ է, թամամ, շմէկ կրակէն փախանք մէկալ կրակը ինկանք :
- ՅԱԿ. Կանգոտե՞ր շորվելու շատ մի խօսիր, բռնէ՛ սա ասեղը ու շեռակէն մը յետոյ կոտայ ձգէ կը յնէ կրկին բռնէ, այդ անգամ բռնակն կնիկն :
- ՅԱԿ. Ա՛ն այս դերձանը, ասեղին անցուր դերձան մը կոտայ :
- ՏԻԳ. Առնելու՞ դերձանը ասեղին ո՞ր անգնէն անցընեմ :

ՅԱԿ. Խնայի՛ր է ինչ է, խըրի՛ր մը ըլլար, գլուխ չէին փաթթեր. ծակը չէ՞ս տեսներ անմիտ :

- ՏԻԳ. Հա՛ւրդ, այդ դիտեմ ես, կարծեցի ուրիշ բան կըսես կնիկն դերձանը անցնել, շատ մը կնիկն ասեղին փաթէն վերջ :
- ՅԱԿ. Չանցուցի՞ր տանս :
- ՏԻԳ. Չանցնիր կոր, վարպետ :
- ՅԱԿ. Բան մ՛ալ խելքդ չկարեր, այսարձեղին տխմարը. դերձանին ծայրը աղաններովը բարակցուր որ դիւրաւ կանցնի :
- ՏԻԳ. Հա, իչտէ այդպէս ըսէ, ես ինչ գիտեմ դերձանին ծայրը բարակցել կայ. ամէմի չայլադ, ուչ սուր քի ուչա :
- ՅԱԿ. Օ՛Ք, խնայի՛րը մեր գլուխը կեղնէ. այսօր եկաւ. այսօր մեզի խելք պիտի սորվեցնէ, ծօ բերանդ ալ մի բանար հիմայ կվընտեմ գրեկ :
- ՏԻԳ. Ձէ վարպետ. ոտքերուդ մատաղ ըլլամ, ես հող մոխրը եմ քու հրամաններուդ հնազանդ, ինչպէս կըսես ասանկ կըլլամ :
- ՅԱԿ. Նայէ այս կտաւը պիտի շուլես, ու դարձեալ թիւր քաշես հանես ասանկ քանի մը որ մինչև սորվիս վարպետը կտա մը կոտայնէ կշարէ Լ. կոտայ Տէգրանին այնպէս ընելու :
- ՏԻԳ. (Ինչ մը ծառայումս շուլէն վերջ) Եղա՞ւ վարպետ :
- ՅԱԿ. Օ՛յ օ՛յ, քիթըդ բերանդ դարձուցիր, կրնէ՛կ հօրդ, որ դուն արհատ պիտի սորվիս :
- ՏԻԳ. Մի խարուիր վարպետ, նայէ թէ վերջը ի՞նչ անմամն վարպետ մը պիտի ըլլամ :
- ՅԱԿ. Հա, պիտի ըլլաս, ատանկ ըսին (ծառայելու մը) :
- ՏԻԳ. Ըսին տեսա՞ր, սխալ չեմ զուրցեր ես :
- ՅԱԿ. Է՛հ, շատ մի խօսիր, քայէ թիւր, նորէն շուլէ, (կտայնէ Լ. կոտայնէ շուլէ, այս վերջին ծառայ մը ներս կոտայ Լ. խոտարհութենէ մը վերջ) :

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՆՈՅՆԻ ԵՒ ՎԱՐՊԱՆ

- ՎՐԳ. Տէրս Ռուսին աղան բարե կընէ, առ չտիդ երթանք :
- ՅԱԿ. Ի՞նչ կայ :
- ՎՐԳ. Կար ո՞ւնիս :



ՅԱԿ. Լաւ երթանք (Իտալի Տէքրանին ուղեւ՝) Ծօ՛, տեղ մի երթաք  
կարիդ նայէ, չըլլայ թէ պարտապ նստիս :

ՏԻԳ. Օ՛յ վարպետ, ադ խօսք մի է հիչ պարտապ կմնամ, ես  
հիմա գործի տէր եմ գործես կը պարապիմ, դնա դու կարդ առ, մի  
հողար միւշթէրի մ'ալ դայ նէ ձեռքէ չեմ հաներ :

ՅԱԿ. Շատ կը խօսիս ծօ. լուռ կարիդ նայէ. (որոք էլեւել) անա  
կանգունը եկա :


ՏԻԳ. Ձէ, չէ, չէ, վարպետ դնա՛ դնա՛ գործիդ, չեմ խօսիր.  
(Վարպետն ու վարդաւն կ'էկնին) :

Տ Ե Ս Ի Լ Դ .

ՏԻԳՐԱՆ ( առնչին )

ՏԻԳ. Այս ի՞նչ կրակի մէջ ինկանք. դպրոցէն ելանք, որ հան-  
դիստ կեանք մը վայելենք. ունեցած հանգիստնիս կորուցինք : Իբր-  
բոցը Ֆալախան մը կար. հոս ատկէց ծանր ատեղ խոթիլ մ'ալ կայ, չէ  
չէ, այս տեղ ալ գործիս չեկաւ. հոս ալ կենալիք տեղ չէ. Աստուած  
իմ. այս ի՞նչ գէշ գիր է իմ ճակտիս գիրը. հանգիստ կեանք մը չը  
պիտի վայելեմ. դպրոցի կեանքս յայտնի. տունը երես չունիմ. միշտ  
թաղիր. միշտ խրատ. հոս ալ անա ասանկ : Բայց ս'հ ինչ ընեմ. ու  
րո՞ւ ինչ ըսեմ. Աստուած ասանկ կամեցեր է. պիտի քաշեմ զատե-  
րըս է : Դպրոցի վարժապետիս թիրեաքի կըսէի. սա անոր վրայ լի-  
մօն սղմեց. չթողուր բերանս բանամ խօսք մը ըսեմ. հապա բանին  
չխաւիլ ինքը գիտէ. ինքը խօսի ու ինձի լուռ լուռ. հասկըցայ,  
հասկըցայ. մենք ասոր հետ ալ տիրլիք չպիտի կրնանք ընել. վախ-  
թին մահանայ մը ըլլար փախչիք. հէմ ի՞նչ ալ սորվեցնէ կոր. կը-  
տաւը պիտի չուլիս, կըսէ ու կրկին թեւը քաշես հանես. ասանկ  
ալ խենդութիւն կըլլայ մի. ասանկ բան ո՞վ ըրած, ո՞վ լսած է. աշ-  
խատէ աշխատէ չինէ, նորէն դարձիր քակէ. մեղայ, մեղայ. անա  
բան մ'ալ տեսանք : Ամենախն չեմ կարեր. դայ հարցընէ աչ նէ,  
կարեցի կըսեմ. ի՞նչ յայտնի, չուլի քաշէ. չուլեցի քաշեցի. էհ,  
քիչ մը երթամ հէլէ քովի չուկաները պարտիմ նայիմ աշխարհքը ինչ  
կայ ինչ չկայ. ան մէկ երկու սահաթէն չդար. ով պիտի սպասէ այս  
չոր պատերը (կերեւոյ Տէքրան) :

(Տեսարանը կը փոխուի)



ՊԱՏԿԵՐ Բ.



Ռուսի տղան նորա՛ իբրաւ արտաւոր լըլայ արտաւոր ին լըլայ յետեւ գիրք  
չեւոյ՛ն է առջև գրասեղան ին լըլայ խաչի ին ու չուան մը դրոսած. քիչ  
մը լէրլ լըլայեւը ներս կ'որնէ :

ՏԵՍԻԼ Ա.

ՌՈՒՍԻՆ ՎԱՂԱՐՇ ՅԵՏՈՅ ՎԱՐԴԱՆ ԱՐՏԱՇԷՍ

ՌՈՒ. Հրամանէ վարպետ, նիստ այդ տեղը. կնարի խնարհութե-  
նով, քիչ մը արեւ կենալէն լէրլ մեր սպասաւորաց համար մէկ երկու  
էնթարի պիտի շինուին. ատեն ունի՞ք դուք կարելու :

ՅԱԿ. Մեր սովորութիւնն է տէր, կար ետ չենք դարձներ :

ՌՈՒ. Է՛հ թող գան տղաքը ու առ չափերը. զանգուլ էլուի ու  
երկու մարդ ներս կ'որնան Վարդան եւ Արտաշէս :

ՌՈՒ. Ծօ, անա դերձակը, ձեզի լաթ պիտի չինեմ. մարդ պի-  
տի ըլլա՞ք, պիտի փոխէ՞ք բնութիւննիդ :

ՎՐԴ. Ինչո՞ւ չէ :

ՌՈՒ. Այս խամչին ու չուանը պիտի վերնա՞յ ասկէց :

ԱՐՏ. Կուզես ու կզնես, աշխարհ հաստատուելէն ազդին ո՞վ  
ատանկ բան մը ըրաւ :

ՌՈՒ. Ձեզ հետ անպիտաններ, առանց ասանց խօսիլ կարելի չէ :

ՅԱԿ. Ի՞նչ խամչի ու չուան են ատանք, տէր իմ :

ՌՈՒ. Ձգէ վարպետ, հողիդ սիրես, ասանց պատճառը մի հե-  
տախուզեր :

ՅԱԿ. Ծեծելու ու կտիտելու սպառնալի՞ք են արդեօք :

ՌՈՒ. Ոչ, կրթելու միջոցներ :

ՅԱԿ. Ձարմանք, խամչիով ծեծելով մարդը՝ հնար է թէ կրթը-  
ուի. չուանն ինչ է :

ՌՈՒ. Կեցիր թերեւս հիմայ կտեսնես երկու քին ալ դադանիքը :



ՅԱԿ. Անանկ կը հասկնամ. տէր, թէ այս սպասաւորնիդ անկիրթ և անսարայ անձինք են ու դքեզ շատ կոխտացնեն :

ՌՌԻ. Իրաւ ես, սիրելիս, բայց այս վշտակրութիւն կամաւոր է ու յօժարութեամբ յանձն առած եմ. որովհետեւ ասոնք կամապաշտ ու իրենց հաճոյիցը մեծցած տղաքներ էին, քերականները ձեռքերնին դպրոցէն փախչողներ. ինչ որ դպրոցը չկրցաւ ընել իրենց, ես հոս տանա մէջ կաշխատիմ ընել :

ՅԱԿ. Այսպիսի դժբաղդ աշակերտ մ'ալ մեզի վիճակած է, բայց ա՛հ. ասոնք կենաց խարտոցներ են. փա՛ռք ձեզ. որ այսչափ ատեն կհամբերէք. մերն այսօր եկաւ. այսօր զինքն վռնտելիքնիս կրունէ :

ՌՌԻ. Իրաւունք ունիք, պարոն վարպետ. իմ ալ համբերութիւնս վերջին ծայրը հասած է : սակայն մէկ անգամ ընդունած և իբրև դաւակ խնամոցս տակ առած ըլլարով խիղճ կընեմ. մէկ մ'ալ ամօթ կհամարիմ կրթելու համար անամներս անկիրթ դուրս արձակել :

ՅԱԿ. Ատաւած ամուլ ու ապարդիւն չթողու աշխատութիւններդ :

ՌՌԻ. Ամէն վարպետ. է՛ն պարոններ սոստանալու աղբիւր չըրամմեղէք թող չափերնիդ առնէ :

ԱՐՏ. Երկուքս մեկէ՞ն :

ՌՌԻ. Ոչ. մէյ մէկ հատ (Արտաշէն կո՛ւտայ յառաջ և վարդեպը ծոցէն չո՛ւք հանելով) :

ՅԱԿ. Ինչպէ՞ս կուղես. երկա՞յն, կարճ, նն՞դ, լայն :

ԱՐՏ. Ինձի ինչո՞ւ կը հարցնես. ալաֆուսնկան չգիտե՞ս :

ՌՌԻ. Ատոնց բերանը մի նայիր. գիտցածիդ պէս ըրէ :

(Կէտի վարդեպը չո՛ւք էլ, Վեյ ղ երկուքս, Վեյ ղ լայնութեանը, Վեյ ղ պարտաւորը, Վեյ ղ թեւերը, «սիւնի թաւանները ինքի վրայ չբերէ») :

ՌՌԻ. Թիւերը չն՞ս գրեր վարպետ :

ՅԱԿ. Գրել չեմ գիտեր տէր. միտքս կը պահեմ :

ՌՌԻ. Աւա՛ղ, մեծ փնտս մը ըրած ես անձիդ :

ՅԱԿ. Իրաւ, տէր. բայց պատճառը՝ որ խորթ հայրս էր միայն Ատուծմէ գտնէ յօժար եմ, վկայ Յիսուս. աչքիս մէկը կոյր ըլլար ու քիչ մը կարգալ ու գրել գիտնայի :

ՅԱԿ. Իկուր դուն. պարոն (Վարդան և կոտայ յառաջ «սոստանալ չո՛ւք հանել») :

ՌՌԻ. Ի՛նչ, բան մը կուզէ՞ք հիմա. վարպետ. ա՛հա կարուելու թօփերը (Երէ՛ս ծրար բան երկնցեւով) :

ՅԱԿ. Հաշխմիս վերջը կը տեսնենք. տէր միայն առ հաշխմնձ քանի մը դահեկան ու թօփ մը սե զայթան տուր կնիթարիի շըրջանակներուն համար :

ՌՌԻ. Շատ լաւ. սրբմն մտիկ ըրէ՛. եղբայր. ա՛հա սոյն խնդրուածքովդ չուանին ու խամշիին դադանիքն ալ՝ զոր կը փափաքէիր իմանալ. յասնուելու կարգն եկաւ : Յուսաջ եկո՛ւր Վարդան (սոստանալը կո՛տայ յառաջ. և Ռոտին շոտնը կը կարգէ բարձրը և օտո ծայրը էր յետը բանելով) :

ՌՌԻ. Ծօ, գնա շուկան (Վարդան կերթայ. Ռոտին կտաշէ շոտնուր) մը բարեկամ պարոն Սահակի խնամութիւր (Վարդան կերթն կերթայ Ռոտին շոտնը կտաշէ) բարեւ խօսէ ինձմէ կերթն կերթայ և Ռոտին կտաշէ. թող մեզ ունեցած պարտքն կերթն կերթայ և Ռոտին կտաշէ, առ հաշխմ քան դահեկան նորէն կերթայ և կտաշէ, քան դահեկան կերթայ և կտաշէ տայ ձեզ և առ եկուր այս անգամ կտաշէ շոտնը և Վարդան կերթայ :

ՅԱԿ. Ա՛հ. ինչ թեթեւ ու բխամիտ է այդ անպիտանը, շատ իրաւունք էր այդպէս կապել :

ՌՌԻ. Ասկէ դատ, ուրիշ ձար չըտայ, եկուր դուն Արտաշ Արտաշ կոտայ օտիկ. Ռոտին խոշնի յետը առնելով :

ՌՌԻ. Առ, պարոն այս ստակը և գնա շուկան Նազարէթեան պարոն Յարութիւնէն թօփ մը սե զայթան բեր սոտնը առնէ Արտաշէս :

ԱՐՏ. Ո՞ր Նազարէթեան Յարութիւնը. ո՞ր տեղ գտնեմ այդ մարդը :

ՌՌԻ. Նոր շուկային մէջ կնտաի գնա, շարնելով խոշնի կռակի հոն հարցուր կցուցնեն քեզ :

ԱՐՏ. Մեծ խան մը կայ այն տեղերը, անոր քովնը կնտաի :

ՌՌԻ. Հա՛, քովերը կնտաի, գնա առ եկուր կերթն կտաշելով խոշնի :

ԱՐՏ. Խանին աջ կողմը, խանութներու երրորդը :

ՌՌԻ. Հա՛, ծօ գնա կերթն կը դարնէ :

ԱՐՏ. Մորտքաւոր մարդ մ'է :

ՌՌԻ. Այո՛, կորիւր կերթն կը դարնէ :

ԱՐՏ. Աչքերը կէօզլի՞ք կանցնէ :

ՌՌԻ. Ի՛նչ, այդ է անցիլը նորէն կտաշելով :



**ԱՐՏ.** Սև վերարկո՞ւ մը կը հագնի :  
**ՌՈՒ.** Շատ կը խօսիս , դնա՛ տոյգ է կը +ռչէ Խ-ճէ Խ :  
**ԱՐՏ.** Անգամ մը թուղթ գրիչ առինք , այն մարդն է՞ :  
**ՌՈՒ.** Կորսուէ՛ , այն է Բ-ժնք ԿԵԼԻ՛ն կը +ռչէ :  
**ԱՐՏ.** Է՛՛ն , ճանչեցինք հիմա . բայց զայնքանը հա՞տ ըլլայ , թէ

արտկ :  
**ՌՈՒ.** Գնա՛ , անոր քով գտնուածը հաստ է , ա՛ն Եկուր ԿԵԼԻ՛ն  
 ք +ռչէ :

**ԱՐՏ.** Թօփը քակեմ , չափեմ կամ կըչուե՞մ :  
**ՌՈՒ.** Թօփը յայտնի է , անպիտան , բաւական է կորիք , ստակը  
 սուր առ Եկուր ԿԵԼԻ՛ն կը +ռչէ :

**ԱՐՏ.** Թէոր այդ զայնքանը հոն չգտնուի , ուրիշ տեղէ առնե՞մ :  
**ՌՈՒ.** Ամա՛ն , դնա՛ , ինչ կընես ըրէ կը +ռչէ :  
**ԱՐՏ.** Առնեմ , հոս բերե՞մ , ինչ ընեմ :

**ՌՈՒ.** Ծօ՛ հապա ինչ պիտի ընես ա-Ե-ԼԻ Բարկանուղ ճը անցիր  
 կորսուէ եթէ ոչ հիմա . . . Ծ-Ե-Ր ճը կը +ռչէ Խ-ճէ Խ :  
**ԱՐՏ.** Ծ՛Ֆ , օ՛Ֆ երթամ , երթամ , կողերս կտարեցաւ և կը Բ-Ե-Լ-Ի  
 Ե-Յ-Ե Երթալու :

**ՅԱԿ.** Իրաւ այս թանձրամիտները ուրիշ կերպով անհնար էր  
 գտակ :

**ՌՈՒ.** Տեսար վարպետ , ուրեմն համոզուէ թէ ո՞րչափ կարեւոր  
 և շահաւէտ է կրթութիւնը ու ուսումը՝ զոր տղայ մը իւր մատաղ  
 հասակին մէջ կընդունի , ասոնք այս հասակներուն մէջ այս հողը ու-  
 նեցած չեն , ժամանակին դպրոց երթալով իրենց փափուկ ըզնղը ուս-  
 ման ու կրթութեան վրձինով մաքրած ու նրբացուցած չեն և թողած  
 են անխնամ , որոյ վրայ ժամանակը տիրանալով զայն փշերով ու զա-  
 նազան կեղեկներով պատած ու թանձրացուցած է և հաստ մարմին-  
 ներու պէս անթափանց բրած է . բանին ու գիտութեանց արեւը ըն-  
 դունելու :

**ՅԱԿ.** Կը համոզուիմ այդ ճշմարտութեանը տէր իմ . սակայն  
 ներեցէք որ փոքրիկ առարկութիւն մը այն կէտին վրայ , որ անձիս  
 կը վերաբերի . ստուգիւ ևս ալ դպրոց տեսած չեմ , բայց ասոնց չափ  
 թանձրամիտ ու ապուշ ըսելու չափ կընամ հարգաբանալ :

**ՌՈՒ.** Այո՛ , դուք ղեքողոյն առաւելութիւն ունիք ասոնց վրայ  
 թայց պատճառը դարձեալ դպրոց տեսնելիդ է , քաղաքակրթութեան

կամ ընտանեկան բարեք կենցաղաւարտութեան գոյգոյրը կրտսի . ո՛ր տեղ  
 դու անշուշտ քու ընկող կըցած ևս ըստ մասն՝ նրբացնել , բայց ա-  
 սոնք ասոնցմէ ալ դուրկ էին . փոզոցները վեղ խաղալէ , չուկաները  
 երկայն երկայն պըտըտելէ զատ ուրիշ գործ չունէին իրենց տղայ հա-  
 սակաց մէջ :

**ՅԱԿ.** Աստուած իմ , ահա վէզ խաղալուն , դպրոց չերթալու  
 պարագ պարագ պըտըտելուն հետեանքը , ո՞րչափ վնասակար եղեր է .  
 ո՛ն , ևս ալ թէպետ այդ հասակիս այս ազգային փարկունքները ունե-  
 ցած չեմ . այլ միշտ լուսանոցի վարպետիս քով արհեստիս պարագած  
 սակայն աւա՛ղ , դպրոց չերթալուս տակա ին քանի՞ դժբաղդ մ'եմ ես  
 եղ՞ուկ , հաղար եղուկ մանկութեան քրերս ապարդիւն անցուցի . զգա-  
 ցի այն նուիրական ու պաշտելի տեղը . ուր տեղ ամեն բարութիւնք  
 լեցուն էին և երջանկութիւնը ձրի կը բաշխուէր . սակայն ևս անդի-  
 տաբար հեռանալով կը հեռանայի անկէց , որով հիմա մարդոց մէջ ա-  
 մենաթշուառը ու եղկելին եմ եղած . վա՛րս ինձ . միտքս խոսքան մնաց  
 բարձր բաներ չեմ կրնար մտածել . կրօնքիս ամենահարկաւոր կէտերը  
 չգիտեմ , բայց անցի՛ր ասոնցմէ , առնարտական քանի քանի վնաս-  
 ներու ենթակայ է . նամակ մը կուզայ չեմ կրնար կարգալ , հարկ ը-  
 լայ գրել , չեմ կարող գրեմ . օ՛Ֆ . կի՛նսոմ չուկաները ժամերով մարդ  
 փնտուկու , հազար թախանձանք , բիւր աղաչանք , չատ գոնողու-  
 թիւնք կրեմն ալ օգուտ չեն ըներ :

Ամենեին գաղտնիք չունիմ , գաղտնիքս ամենուն քոյն է . սո-  
 մար չունիմ , առնելիք տալիք և բոլոր հաշուական գործողութիւնքս  
 իմ մտքիս մէջ պիտի գրուին , բայց աւա՛ղ . մարդկային տկար միտք  
 մը որչափ բան կրնայ ամբխիլ : Արհեստս ալ կաղնկաղ կը քալէ ,  
 ինձմէ տարիներով ետք ոտք կընող արհեստաւորներ մեծապէս յառաջ  
 դացին իրենց արհեստներուն մէջ , նորանոր հնարքներով ու դիտե-  
 րով , սակայն ևս միշտ ունեցածիս վրայ եմ . ուղտի պօչի պէս ոչ  
 կերկրենամ ոչ կը կարճնամ , պատճառը՝ կրկին անուսումնութիւնս է ,  
 ուրիշներ զմազրութեան մաթիմաթիկայի ու ուրիշ զանազան գիտու-  
 թեանց հմտութիւն ունենալով տեսակ տեսակ ծաղկիներ կը թափեն .  
 նոր նոր ձեւեր կը յօրինեն . սակայն ևս ապուշ ապուշ նոցա վրայ դի-  
 տելով միայն հեռնալ գիտեմ . ասոնց ապրուստը իրենց մատերու ճար-  
 տարութեան վրայ է , բայց իմն այս խեղճ բազուկներու անդադար  
 շարժման մէջ . հազար սակ մէկ փարայի գա՛րկ ու զարկ , ճշմարիտ



տէր իմ, ինչպէս բո՛ւ, մարմնոց մէկ մասը գիտ ու խել ուրար, հա-  
զարներով պարտք սննն պի, յոժարութեամբ կրնոյուն ի ազգաբէն .  
միայն թէ քիչ մը ուսուեւը ու գիտութիւն ունենայի :

**ՌՈՒ.** Ապրիս, ագնիւ վարպետ . որ այդպէս զգացած ու ճանչ-  
ցած ես ուսման կորևորութիւնը և աշքան տէր ու համակրութիւն  
կը դցունես սնտը, քանի՛ կը ջանիկ էի ևս կ'իէ այս մեր անպիտաննե-  
րուն՝ որոնք քեզմէ աւելի չափանաս կըրած են, կրնայի ճանչցնել ձեր  
քառորդին չափ ուսման յարգը ու գիտ նուորութիւնը :

**ՅԱԿ.** Ձեր այս ազգու ու դժուարավիշպ միջոցներով մեծ յոյս  
ուենիք, թէ ոչ միայն անո՞ք՝ որ մարդոց մ'ջ մեծոց բանական մար-  
դիկ են . այլ յեւան կենդանիները իսկ կրնան զգաստանել, միայն թէ  
ժամանակի կարտութիւն ունի :

**ՌՈՒ.** Ատոր ալ երկարութենէն չպիտի յուսանատիմ ես . միայն  
թէ աշխատութիւններս իսպառ ի տերև չելլեն :

**ՅԱԿ.** Ազգանով եղիք, տէր իմ, յարատև աշխատութիւնը աճան  
դժուարութեանց կը յաղթէ :

**ՌՈՒ.** Այդ սկզբանց ծառայողներէն եմ :

**ՅԱԿ.** Է՛հ, տէր իմ, այն մի անգամ և եթ ձեզ հետ տեսուե-  
լուս պատիւն ունենալովս, իբաւ խիտ ծանր և դժուար կուգայ ինձ  
բարձր ներկայութենէն ու քան զմեզր անուշ խօսակցութենէն մէկու-  
սանալ, սակայն վերահաս գործոց ստիպողականութիւնը կը հարկադ-  
րէ զիս մեկնելու հրաման խնդրել ձեզմէ, արդ կը հաճի՞ք շնորհել  
զայն :

**ՌՈՒ.** Չեմ կրնար արդելք ըլլալ քեզ պէս աշխատութեամբ ապ-  
րելու կարտ արնեսատորի մը, սակայն սիրելիս հողիս զձեզ շատ  
սիրած ըլլալով, այս գուռը միշտ բաց կը դնեմ առջևդ, որպէս զի  
պարապ եղած ատենդ միշտ և անարգել գաս, ու քու այդ համեղ ու  
զուարթ խօսքերով միտխարիս զիս, յաւէտ հողիս վշտայնող իմ ան-  
պիտան սպասուորաց յիմար արտրքներուն գէմ :

**ՅԱԿ.** Ընդունեցէք ուրեմն որո՞ք կանգնելով այս առթիւ խորին յար-  
գանքս ու արտագին շնորհակալութիւնս .

**ՌՈՒ.** Գո՛հ եմ և ես սիրելիս, բայց ուղածնիդ չպիտի սպասէք :

**ՅԱԿ.** Կրնան ետքն ալ զրկուիլ :

**ՌՈՒ.** Դատ լաւ, հրամմեցէք :

Վարպետը ծրարէբը կանեւ կ'իկնէ և Ռուսին առանջն ձայով վերա-

տին հերբը յետը կառնէ և կ'արբայ . բառայան արեւ անցնելն վերջ, Վար-  
դան Գանի ղը Կերակն յետը ներս կ'որնէ :

**ՅԱԿ.** Տէր իմ անաւատիկ հերբերը երկնցեւով :

**ՌՈՒ.** Ծօ, ի՞նչ են ատո՞նք :

**ՎՐԳ.** Քերական չուղեցի՞ր, անա զանոնք բերի :

**ՌՈՒ.** Հայ, անիծեալ ըլլաս, չըսի՞ որ քսան զանեկան բեր,  
զանեկանը քերակա՞ն ըսել էր :

**ՎՐԳ.** Հապա ինչ ըսիլ է, քերականութիւն չգիտեմ տէյի բողո-  
րովին հայվա՞ն մի եղոյ, բայց չէ . դուն ամէն բան ասանկ կրնես,  
երեք ալ թանաք ուղեցիք զնացի մեր մեծ զանակը բերի, բերելէս  
վերջը կ'ար հանեցիր, թէ թանաք միւրեքքէպ ըսել է, հիմայ ալ  
զանեկանին ո՞վ զիտէ ինչ պիտի ըսես : Ա՛խ, ա՛խ, քիչ մը քերակա-  
նութիւն գիտնայի տէ քեզի խաղ ու խաղք ըլլալէն ազատէի :

**ՌՈՒ.** Լու՛է, անմիտ շառ մի խօսիր, հիմայ խարազանը կիջնայ :

**ՎՐԳ.** Հա գիտեմ, խարազան խամշին ըսել է :

**ՌՈՒ.** Նորէ՞ն կերկնցնես ծօ, անա մարմնդ փուեցի, կըտ և  
Խարազնը յետը որո՞ք կ'եւրէ :

**ՎՐԳ.** Ետ՛ ետ՛ երթալով մի բարկանար տէր իմ, հիմայ երթամ  
հրամանդ կատարեմ :

**ՌՈՒ.** Նորեւով յանցանքը իմս է, չուանը շուտ թողուցի ձեռ-  
քէս, եկու հիմայ մօտիկ Վարդան կուգայ, Ռուսին նորեւ յետը կ'աղէ .  
և շառնին ղի ծայրը յետը գահելով :

**ՌՈՒ.** Առ այս գրքերը քրեբը կուգայ Վարդանին, Վարդան կա-  
նէ քրեբը երթալու իջուայ, Ռուսին կուտ շառ կրկին մեր բարե-  
կամ պարն Սահակի խանութը կերթայ Վարդան և Ռուսին կուտ տուր  
իրեն ու ըսէ որ կերթայ կրկին Վարդան և Ռուսին կուտ շառնը, այս քե-  
րականները սխալմամբ արքեբը կրկին կերթայ և Ռուսին կուտ մեր տե-  
րօջը ուզածը քսան զրուշ էր կերթայ և կուտ քսան գրուշ կերթայ Վար-  
դան և Ռուսին կուտ տուր ասանիմ կերթայ և կուտ հասկցա՞ր քսան զրուշ  
պիտի բերես կրկին երթալու իջուայ Վարդան և այս անբո՞ք կ'ելէ Ռուսին շառնը  
կ'աղէ և կ'եղաւ ըսելով անցիր Աստուած շնորհք սայ Վարդան կերթայ :

**ՌՈՒ.** (Առանչին) Ո՛վ գիտէ, այս անգամ ալ ի՞նչ պիտի բերէ Աստ-  
ուած իմ այս ինչ թանձր ու անբան գլուխներ են, որ միշտ ծեծն ու  
յանդիմանութիւնը անպակաս է վրանին, ու դարձեալ մաղի չափ զլստ-  
տանալու մը նշան չեն ցոյց տար : Պարան դերձակն յուսադրեց զմ'ջ



թէ քիչ օրէն պիտի հնարաւորին ի կարգ բերել . համոզուելով թէ այս միջոցներուն լեռան կենդանիներն իսկ չեն կրնար չուշաբերիլ , սակայն սխալ էր , սխալ : Երաւ լեռան կենդանիներն հնարաւոր միջոցներով կրնան մօտենալ կրթութեան ու ընտանեանալ մեզ , ինչպէս կտաննմք շատ անգամ վայրի կառլիկները ու արջերը , սակայն ասոնց համար բնաւ յոյս չտեսնուիր , որովհետեւ ինչպէս յայտնի իրողութիւն մը , թէ ծառ մը մատղայ ատենը կծու կամ կշտկուի , նոյնպէս ալ մարդը՝ որ աստիճան կիրթ կամ անկիրթ ապագայ մը ունենայ , մատղայ հասակին արդիւնքն է . այնպէս զի եթէ որ և է մէկը չկրցաւ ուղղուիլ կամ միտքը նրբացնել իւր տղայ տիտղ մէջ : Արբունքի հասնելուն ուղղուիլ կամ նուրբ միտք ունենալ անհնար ըլլալու չափ դժուար է . ինչպէս ծռած հաստ արմատ ու միւս ծառի մը ուղղուիլը , ո՛հ , քանի և ողորմելի և թշուառ են սոքա , որ իրենց բուն ուղղուելու հասակին մէջ չեն ուղղուած ու հիմա այսպէս ծուռ ու այլանդակ բան մը ձեւանալով մարդկային սեռին մէջ մարդոց դէմքով հրէշներ իջած են : Աստուած իմ , չգիտեմ քո դատաստանի օրը ի՞նչպէս պիտի տեսնես ասոնց և այսպիսիներուն դատաստանը . որոնք բարին ու չարը չկրցան ճանչնալ , պարտն ու պաշաճը խըտրել . մեղքն ու վարձը իրարմէ որոշել , արդեօք դատնք աւելի պիտի դատապարտես , թէ սոցա ծնողքը՝ որոնք իրենց դաւակնելու կրթութիւնը իրենց պարտք համարելով՝ հոգ չըրին զանոնք իրենց մատաղ հասակին մէջ կրթելու : Ար համոզուիմ այո՛ , ծնողքները պիտի ընդունին արժանաւոր հատուցումը , սակայն աւա՛ղ , ասոնք ալ երկու կենաց իրանութենէն զրկուեցան , ոչ հոս վայելեցին մարդոց վերապահեալ աշխարհի օրինաւոր ու համեստ բարիքները , ոչ ալ հոն պիտի վայելեն անվախճան իրանութիւնը , ասդին առաքինութեան պտուղ մը չգործածելուն համար . ով ծնողք , ծնողք , ձեր զաւկըներուն ապագային համար մեծ ու ծանր պատասխանատուութիւն կայ վրանիդ , զգուշացէք և խիստ զգուշացէք ձեր տղայքը իրենց տղայ հասակին մէջ իրենց հաճոյիցը գահավէժ հոսանքին թողնելու , կրթեցէք զանոնք բարի կրթութեամբ ու ճշմարիտ դատարարակութիւնով , ուսուցէք նոցա օգտակար ու համաստ զիտութիւնները . եթէ ասոնք ըրիք երանի ձեզ , եթէ անհոգութեան տալով անտես ըրիք վայ հազար վայ ձեզ :

(Այս պահանջ յանկարծ ներս կը ծորէ Արքայ և զայնանք երկնցեւելով) :

ԱՐՏ. Տէր իմ , ահաւասիկ :

ՌՌԻ. Այս է (նայելով զայնանք) ապրիս պարտն , դուն քիչ մը աւելի կարժես Վարդանէն , հրամանս թէ և ուշ՝ բայց ճշգիւ կատարելուք համար :

ԱՐՏ. Քի՞ մը աւելի կարժեմ , ո՞ր ատեն Վարդան մէկ հրամանդ չնորքով կատարած ունի :

ՌՌԻ. Ե՛հ , շատ մի գովիր դու գըեզ , հիմա երկինքը կիլլես :

ԱՐՏ կամ ու կերեւամ , Աստուծոյ համար շիտակը զուրցէ :

Այս ինչպէն կոչուի Վարդան

ՌՌԻ. Ուր է Վարդանին ուղղեալ :

ՎՐԴ. Ահա բերի յետեւ ճիշտը կը խօսէ նայինք այս անգամ ալ ի՞նչ յանցանք պիտի գտնես և կը դնէ բերած սրտիկերը ճիշտեղանի վրայ

ՌՌԻ. Սրտիկերը հարեւրէ՛ք Վարդան քիչ մը քիչ , այս էր ուղածս :

ԱՐՏ. (Առանցիկ) Մի , ի՞նչ ձրի է ասոր ափէրիմը :

ՎՐԴ. Չտարա՛ւ սիրտդ , պարտն , հէլպէթ ինձի պէս գործունեայ ու աշխոյժ ծառային ափէրիմ կայ ու կայ :

ԱՐՏ. Անմի՛տ կարծեցիր , որ իրաւ կրտէ , քեզի պէս ապուշին որ ափէրիմ ըսուի , ինձի երկինքը հանել պետք է :

ՎՐԴ. Քանի՞ կրնէ քեզ պէս թիմազուիսը , որ պղտիկ խօսք մը վեր առնելու համար յիտուն խարազան կուտէ :

ԱՐՏ. Ամօթ չէ , պարտն , խարազան ուտելը , բաւական է որ ինձի յանձնուած դործ մը ճշգիւ կը կատարեմ :

ՎՐԴ. Գործ կատարող ե՞ս մի եմ թէ գու , գանդաղ կրեայ երեք ժամէն բերիր մէկ պղտիկ դայթանը :

ԱՐՏ. Վերջապէս բերի :

ՎՐԴ. Վերջապէս ես ալ բերի :

ՌՌԻ. Ե՛հ , շատ մի խօսիք , երկուքդ ալ մէկ կտաւին թիւէն էք երկուկդ ալ գետին անցնելիքներ , պակասութիւննիդ չէք տեսներ . կլեր ինքզինքնիդ կը գովաբանէք , դուն հոս եկուր Արտաչէ՛ս :

ԱՐՏ. Հրամանեցէք , մօտենալով , ի՞նչ հրաման ունիք :

ՌՌԻ. Ա՛ւ աս ստակը և դայթանը ու տար հոս եկող թէրզիլին :

ՎՐԴ. Մեր լաթերը ձեւող թէրզիլին :

ՌՌԻ. Հա , ծօ դնա՛ , քաշելով խօսիլի :

ՎՐԴ. Ուրիշ բան մը ըսե՛մ իրեն :

ՌՌԻ. Ո՛չ , անցի՛ր , կրէն քաշելով խօսիլի :



ԱՐՏ. Թէոր խանութը չգտնուի վարպետը , ի՞նչ ընեմ , համբե-  
րե՞մ որ դայ , թէ աշկերտին տամ :

ՌՈՒ. Գնա՛ , աշկերտին տուր , կրկին կը ղարնէ :

ԱՐՏ. Աշկերտ չունինէ՛ , ի՞նչ ընեմ :

ՌՈՒ. Ամա՛ն , կորսուէ՛ , ինչ կընես ըրէ , +աշկերտ խո՞ջնն :

ԱՐՏ. Աւելի ստակ կամ ուրիշ բան մը ուզենէ , ի՞նչ ըսեմ :

ՌՈՒ. Կորի՛ր ան չուզէր , կրկին կը ղարնէ :

ԱՐՏ. Ղայթանին չհաւնի՞նէ :

ՌՈՒ. Նորէն կը խօսիս , կորսուէ՛ առջեւէս , կրկին կը ղարնէ :

ԱՐՏ. Պատուիրե՞մ որ աղէկ կարէ :

ՌՈՒ. Հողիս քակեցիր ծօ՛ , բաւական է , հիմա մարմինդ կիւռեմ  
որո՞ք կէլէ և ամառ մը խո՞ջնն +աշկերտ պէ՛տք ուրիշն է :

Գէլ մը կէնալէ՞ վերջ երթանք և մենք պարոն ճաշի ժամանակ է :

Վարդան խոնարհութիւնն կընէ և երկուտը զէկէն կ'Ակնին :

Տ Ե Ս Ի Լ Բ .

ԱՐՄԵՆԱԿ (առանջին)

ԱՐՄ. Ուր է , հայրս . հոս չկայ , իմացանք որ աշկերտ մ'ալ ա-  
ռած է քովը , ո՛ւր է այն ալ աստեղ չէ . Աստուած իմ , բայ խա-  
նութ մարդ մը բան մը կվերցնէ , և ահա ես ալ եկած եմ մկրատը  
տանկու , տանիմ , պիտի գայ հայրս վնտուէ , չտանիմ , տունը մօրըս  
կարեւորութիւն ունի , ո՛րն ընեմ շուարեցայ . բայց չէ , տանիմ ու  
ինքը չեկած շուտ մը կղարցնեմ : (կարնէ Վրարը կ'երկայ)

Տ Ե Ս Ի Լ Գ .

ՏԻԳՐԱՆ (առանջին)

ՏԻԳ. Օ՛ր , վարպետ ալ դեռ չէ եկեր , լաւ որ չուկաները բա-  
ւական պորտեցայ , ա՛հ , ի՞նչ աղէկ վայելիւր բաներ կային , տեղ  
մը հասուն հասուն խաղաղներ . տեղ մը կարմիր կարմիր խնձորներ ,  
անդին էթտերը դալալ ու տիւտիւկ կը ծախէր , սակայն աւա՛ղ . քո՞վս  
ստակ չկար , ինչ որ է տեսայ ես , մնաց ստակ ձեռք անցնելը , այդ  
ալ դիւրին շատ նեղը մնամ , սննէն պղինձ մը կամ այս խանութէն  
աղէկ բան մը տանիմ՝ պաղաղին տամ նէ ձեպս ծոյս չլեցունէ՞ր մի :  
Այս ալ եղաւ , է՛հ , հիմա վարպետս ալ պիտի դայ , այո՛ , թող դայ ,

ես հոս դործիս վրան եմ , կարեցիր մի՛ , կարեցի . ի՞նչ յաջանի չկա-  
րելս . շիտակը՝ ամեն օր ասանկ ըլլայ նէ աղէկ , այն թող երթայ կար  
ձեւէ , ես ասղին ուզածիս պէս պտըլիմ շատ աղէկ կեանք մէ՛ջս ,  
Աստուած երկար ու հաստատուն ընէ : Բայց ահա ոտքի ձայն մը կլսեմ  
իրաւ մէկը կուգայ կոր , վարպետս է՞ . այո՛ , այո՛ , այն է :

Կը՛ւ և աւելցուցէն կ'ըսէ՛ առջեւ Նորած որդը Գործի , առեւը յեռեւ  
առեւելով կ'իտէ ըսելէ , վարպետս ալ կուգայ Գործի :

Տ Ե Ս Ի Լ Դ .

ՅԱԿՈՒ ԵՒ ՏԻԳՐԱՆ

ՅԱԿ. Կը կարե՞ս Տիգրան :

ՏԻԳ. Հապա ի՞նչ պիտի ընեմ , դուն ամանկ հրամանս չըրի՛ր մի :

ՅԱԿ. Ապրի՛ս , այսպէս աշխատող և դործունեայ եղիր , ես այդ-  
պէս կուզեմ իմ աշակերտներս :

ՏԻԳ. Ըսել է ճանչցար իմ արժանաւորութիւնս , ուրեմն ալ կան-  
գունը չպիտի խաղայ դիտուս կամ ասեղը մասնորուս :

ՅԱԿ. Նորէ՞ն սկսեցիր յիմարաբանութիւններդ , շատ մի խօսիր ,  
ո՛վ եկաւ , ո՛վ դնաց այդ ըսէ ինձի :

ՏԻԳ. Մեր խանութին դունէն մարդ սաք ներս չգրաւ , երկու  
ժամ է միայնակ նստած եմ :

ՅԱԿ. Է՛հ , ալ կարիդ նայէ : (Տիգրան կ'իտէ կարել և վարպետը թօփն  
ձեւը առեւելով կ'իտէ յեռեւ , կանգունով զգիւնէ վերջ Վրար կ'ըսէ  
առաջին Նայելէն վերջ) Մկրատը չկայ , ծօ՛ , ի՞նչ եղաւ :

ՏԻԳ. Ես ի՞նչ գիտեմ , ենչ եղաւ , չգողցայ չպահեցի , ուր որ  
դրիր հոն է :

ՅԱԿ. Անիծեալ ըլլաս , հոս դրած էի (յեռուքը ցընելով) ո՛ւր է :

ՏԻԳ. Չեմ գիտեր :

ՅԱԿ. Ի՞նչ եղաւ հասրս , ըսել է հոս չէիր դուն ու կիան ուրիշ-  
ները գողցան :

ՏԻԳ. Ո՛ւր պիտի երթայի , հաստատուն կերպով հոս նստած էի :

ՅԱԿ. Շուտ +աշկերտ կանգունով ուրիշ խօսք չեմ ճանչեր , մկրատը  
ՏԻԳ. Չեմ գիտեր , վարպետ .

ՅԱԿ. Գիտես և պիտի բերես : Հնարը չկայ , պիտի գայ մկրատը ,  
որու տուիր շուտ ըսէ՛ ինձի :  
ՏԻԳ. Չգիտեմ վարպետ , Աստուածս Աստուածիդ վկայ , չգիտեմ



ՅԱԿ. Հապա ի՞նչ եղաւ, ո՞ւր դնաց այդ անհողի մկրտը :

ՏԻԳ. Կարելի է դեւերը կամ սատանաները վերուցին, կիցիլ՞ քիչ մը, նայինք ուսկից կ'ըլլէ :

ՅԱԿ. Կենալու ժամանակ չունիմ, շուտ մկրտեալ :

ՏԻԳ. Աստուած իմ, ի՞նչ պէլայի մէջ ինկանք, առանկ' ամբա-  
բիշտ մարդ կըլլա՞յ զիս նեղը դրեր մկրտա կողէ, գիտես թէ Աստ-  
ուած մը եղայ ու իրեն մկրտա պիտի ստեղծեմ,

Այս ժնայն Արեւոյ կոտայ կրտը յետը և զարկտը հետեւն րեւելի :

Տ Ե Ս Ի Լ Ե .

ՆՈՅՆՔ ԵՒ ԱՐՄԵՆԱԿ

ՅԱԿ. Ծօ, այդ մկրտալը ո՞ւր տարեր էիր :

ԱՐՄ. Հայր իմ, մայրս ուղեց սաստիկ պէտք մը ունենալուն համար ես եկայ տանելու :

ՅԱԿ. Ո՞վ կար հոս :

ԱՐՄ. Մարդ չկար, և թէպէտ քու բացակայութեանդ խիղճ ըրի տանելու, սակայն պէտքը խիստ ստիպողական ըլլալուն չկրցայ մինչև գալդ սպասել :

ՅԱԿ. Յանցանքդ խիստ մեծ է պարոն, սակայն առաջին անգա-  
մէն ըլլալուն կենրեմ, միայն թէ ուրիշ ատեն առանց իմ գիտութեա-  
նըս բան չվերցնես խանութէն, բայց ծօ, դուն ստախոս, (Տէր-  
ուղէլու) հոս էի կըսէիր, ո՞ւր է ի՞նչպէս եղաւ :

ՏԻԳ. Ի՛նչ, կենայի տէ՛ ինչ պիտի ըլլար, ձեռքս կտաւ մը տուիր շուլէ, շուլէ, ուրիշ բան չկայ, ժամանակ մը շուլիցի, անօգուտ բան սիրտս նեղացաւ, ելայ քիչ մ'ալ շուկաները պղտելու, շա՞տ կը տեսնես այդչափ զբօսանք մը :

ՅԱԿ. Լուէ՛, լուէ՛, անպիտան, դու հոս զբօսանքի եկած չես, հա-  
պա արհեստ սորվելու և քու մեծ ու առաջին պարտքդ է խանութին հակողութիւնը՝ մանաւանդ իմ բացակայութեանս, սակայն դու քանի որ ոչ հակողութեան օգուտ ունիս և ոչ ալ արհեստիդ, բացարձակ կըսեմ որ հեռանաս ասկէ :

ՏԻԳ. Վարպետ, ինչ կըսես, չեմ կրնար հեռանալ ասկից :

ՅԱԿ. Կորի՛ր կորի՛ր աշխարհին անմիտը, միշտ վրասներդ քաշե-  
լէս մէկ անգամ կորսուիլդ բարւոք է, ինչպէս այսօր մկրտալ միտ աղան տարաւ, վաղը կուգայ գոլը կը տանի, միւս օրը մըլթէրին

կուգայ խանութը մարդ չգտնէր, պէտքը չես, պէտքը չես ինձի, դնա ուրիշ տեղ մը չբտիս ըրէ :

ՏԻԳ. Վարպետ հոգւոյդ մատաղ ըլլամ, ալ խանութէն դուրս չեմ կ'ըլեր, այս անգամ ներէ յանցանքս :

ՅԱԿ. Զէ՛, չէ՛, արդէն գու արհեստիդ ալ օգուտ չունիս, դնա՛ ուրիշ կերպով գլխուդ ճարը նայէ :

ՏԻԳ. Կաղաչեմ վարպետ, միայն այս անգամ ալ ներէ ինձի :

ՅԱԿ. Ի՛նչ կորի՛ր, խնդիրը կըթող ես չհնայի, արդէն պէտք չունէի ես աշկերտի, և եթէ առի գրեզ քոյս միայն հորդ սիրոյն՝ ու այն յուսովն էր թէ դուն քիչ շատ դպրոցի մէջ մեծցող ու կրթութիւն առած խելացի տղայ մ'ընես, ու դուն ինձմէ արհեստ սորված ա-  
տենդ, ես ալ քեզմէ խելք ու կրթութիւն պիտի սորվիմ, բայց ահա մէկ օր մը միայն քեզ մտիկ ընելով քեզ մնաց որ ունեցած խելքս ալ կորսնցրնէի :

ՏԻԳ. Է՛ն, հիմա վերջապէս որ և է թախանձանք օգուտ չպիտի ընենս

ՅԱԿ. Ո՛չ, պարապ մ'աշխատիր, դնա՛ դործիդ :

ՏԻԳ. Վա՛խ, ուր կըթամ, ո՞ւր կորսուիմ, տեղ մը հանգիստ ու պատիւ չունիմ, դպրոցին մէջ անսնկ կանարգուէի, ասկից ալ ահա անարգուելով դուրս կը ձամբուիմ, ալ ի՞նչպէս պիտի դառնամ տուն հո՞նչպէս պիտի երեսնամ հօրս, ի՞նչ խարեմ, ի՞նչ հաւատացնեմ ծը-  
նողացս, ո՛հ, ինչ ալ ըսեմ, չպիտի հաւատան և կրկին զիս պիտի դատապիտեն, ա՛խ, մեռնի, մեռնի, ասանկ բաղդը :

ՅԱԿ. Բաղդը գործ չունի այս տեղ, պարոն, յանցանքը քուկդ է, կորուստդ քեզմէն է և այս ոչ ուրիշ պատճառաւ մը այլ միայն մանուկ հասակիդ մէջ տղայական հաճոյիցդ, զգայական հեշտին ցանա-  
կութեանցդ ու յամառ կամքիդ մղմանը հետեւելով միտքդ մշակելու հող չունենալուն համար :

ՏԻԳ. Ո՛հ, արդեօք ատոր համար է անսնկ է նէ կըթամ կրկին համոզեմ հայրս ու մեր Սեպուհ բարեկամը զիս կրկին դպրոց դրկէ :

ՅԱԿ. Ատկէց դատ ուրիշ փրկութեան միջոց չկայ քեզի, դնա՛, այդ բանին աշխատէ :

ՏԻԳ. Երթամ, այո՛, մնաս բարով :

ՅԱԿ. Երթաս բարով, կը յեկնէ :

ԱՐՄ. Հայր, ի՞նչպէս այս յիմարը ընդունեցիր քեզ աշակերտ :

ՅԱԿ. Սիրելիս, ի՞նչ գիտեմ, դէմքէն աշխոյժ տղայ մը կ'ընեսար ի՞նչ գիտեմ թէ մտքին ամանը պարապ էր :



ԱՐՄ. Ասիկայ մեր դպրոցի աշակերտներէն էր :

ՅԱԿ. Ուրեմն գիտես , ի՞նչպէս էր իւր դպրոցական կեանքը :

ԱՐՄ. Շատ վատթար . ամենեւին կարգալու ու սորվելու ջանք չունէր , դասատուէն միշտ ծեծ , միշտ անարգանք , միշտ յանդիմանութիւն կը լսէր , բայց դարձեալ բնաւ չէր զգաստանար , ընդհակառակն բոլոր օրը խաղալով խնդալով ու պտըտելով կանցընէր , միշտ կուռիլ կուգէր , հայհոյանքը անպակաս էր բերնէն , որով ոչ միայն մենք կը վախնայինք իրմէն , այլ դպրոցի դասատուները անդամ :

ՅԱԿ. Ի՞նչ , սիրելիս , տեսա՞ր այդպէս ըլլալուն հետեւանքը :

ԱՐՄ. Այո՛ , հայր , շատ աղէկ գիտեմ , թէ մարդն կատարեալ մարդ ընողը ուսմունք ու կրթութիւնն են , առանց որոյ մարդ ոչ ուզիլ մտածում կրնայ ունենալ , ոչ խելք և ոչ դատելու կարողութիւն . իրօք կենդանի մի է փիլիսոփային մէկուն քսածին պէս երկուտանի և անփետուր :

ՅԱԿ. Ուրեմն պիտի ջանաս այսուհետեւ դաւակս , այդ կենսաբաշխ տարերաց ի քեզ գոյութեան ու զարգացմանը :

ԱՐՄ. Հայր ի՞նչ ըսի , ասկէ վերջ իմ բոլոր հոգս ու մտածումս ատենք են , և ատենք պիտի ըլլան գիշեր ցորեկ , անդող անդադար :

ՅԱԿ. Եւ եթէ ես զքեզ ուզեմ հանել դպրոցէն :

ԱՐՄ. Ո՛հ , այն իմ մահուան օրն է , սակայն ատոր ալ մէկ ճարը կը գտնեմ հայր . կուգամ այն ատեն կերկնամ առաջդ . կուտամ սուր մը ձեռքդ և կըսեմ . կամ անա ոչխարի պէս մորթի՛ք զիս այս տեղ որ մեռնիմ . կամ թող որ դպրոց երթամ . այն ժամանակ դուք ս՛րբ կրնաք ընել :

ՅԱԿ. Շատ ապրիս դաւակս . ես քու հաստատամտութիւնդ փորձելու համար ըսի զայս . Ատուած պսակէ քու իղձն ու աշխատութիւններ . վառահեղի՛ր դու իմ կողմէս , որ եթէ մուրալու իսկ կարօտ վիճակի մէջ խցում . դարձեալ ճար մը պիտի ընեմ զքեզ զըսրոցէն չհանելու , միշտեւ որ լրիւ կատարելագործես ուսմունքդ :

ԱՐՄ. Տէրը քեզ շատ կեանք և կարողութիւն տայ :

ՅԱԿ. Ի՞նչ , երեկոյ է չերթանք սիրելիս :

ԱՐՄ. Հրամանիդ կարօտութիւն ունիմ , հայր :

ՅԱԿ. Քալէ ուրեմն հայրը առջեւն որան երեւն կեկի՛ն :







P. U.

No. 3468